

**KOMITAS.CA**  
 COMPLEXE FUNÉRAIRE  
 (514) 331-0400

PRE-ARRANGEMENT 0% INTEREST  
 1, 3, 5, 10 YEAR PAYMENT COVERED BY  
 "ASSURIS" ASSURANT LIFE OF CANADA

## Հայ Դատի Յանձնախումբի Քէնթի եւ Գլեմէնթի հետ քննարկեց Արցախեան հիմնահարցը



Նախորդ շաբթուան ընթացքին, Հայ Դատի Շրջանային յանձնախումբի հերթական հանդիպումներուն շարքին, Հայ Դատի Օթթաուայի գրասենեակը ներկայացնող պատուիրակութիւն մը խորհրդակցական հանդիպումներ ունեցաւ նախկին նախարարներ եւ այժմու Պահպանողական կուսակցութեան երեսփոխաններ Փիթըր Քէնթի եւ Թոնի Գլեմէնթի հետ:

Մտաւորապէս մէկ ժամ տեւած հանդիպումներու ընթացքին, Հայ Դատի ներկայացուցիչները զոյգ երեսփոխաններուն հետ քննարկեցին Հայ Դատին առնչուող առաջնահերթ հարցեր, որոնց շարքին էին Թուրքիոյ ժխտողական քաղաքականութեան հակադարձելու անհրաժեշտութիւնը, Արցախի հիմնահարցը, Գանատա-Հայաստան երկկողմանի յարաբերութիւններու զարգացման հոլովոյթը, ինչպէս նաեւ Գանատա-Հայաստան խորհրդարանական խմբակցութեան աշխատանքները:

Յատուկ շեշտ դրուեցաւ Արցախեան հիմնահարցի խաղաղ կարգաւորման եւ անոր նկատմամբ Գանատայի գրական կեցուածքը շարունակելու եւ զայն աւելի աշխոյժ գործադար տեղափոխելու անհրաժեշտութեան վրայ: Այս հարցով, Հայ Դատի յանձնախումբի անդամները զոյգ երեսփոխաններուն ներկայացնելով ներկայ իրավիճակը, հիմնականօրէն կեդրոնացան ատրպէյճանական հրադադարի խախտումներու դատապարտման եւ զանոնք կանխարգելելու տարբեր միջոցներու որոնման հրամայականին շուրջ:

Իրենց կարգին, երեսփոխաններ Քէնթի եւ Գլեմէնթ, ամբողջական աջակցութիւն ցուցաբերելով Հայ Դատի աշխատանքներուն, Հայ Դատի ներկայացուցիչներուն հետ բաժնեցին իրենց կարծիքն ու դրական կեցուածքը վերոնշեալ հարցերուն շուրջ: Լուսանկարը՝ Չախէն՝ ընկ. Սեւակ Պէլեան, Փիթըր Քէնթի եւ ընկ. Արգար Միրաբեան:

## Արամ Էլախօզ Հաւալի քաղաքապետական ընտրութիւններու թեկնածու



Հաւալի քաղաքապետական ընտրութիւններուն իր թեկնածութիւնը առաջադրած Արամ Էլախօզ Յուլիս 30-ին կայացած նախընտրական հանգրուանին յաղթանակ արձանագրեց եւ դարձաւ Movement Lavallois կուսակցութեան Renaud ընտրատարածքի պաշտօնական թեկնածուն: Նշենք, որ 2017-ի Նոյեմբերին պիտի կայանան Հաւալի քաղաքապետական ընտրութիւնները:

## Զօրավար Լեւոն Մնացականեան. «Եթէ նոր յարձակում ըլլայ՝ հայկական կողմը պիտի անցնի հակայարձակման»



Կարդալ էջ 6

### ԱՅՍ ԹԻՒՈՎ

«Ժողովրդագրական Ճգնաժամին Ընդառաջ», էջ 4

Գանատայի Ժառանգութեան եւ Բազմամշակութայնութեան նախարարի խորհրդարանական քարտուղարը այցելեց Գեմպրիճի հայ կեդրոն, էջ 7

Սփիւք-Հայրենիք Համահայկական Ժողովի նախօրէին, էջ 5

Մեր ընկեր Գալուստը, էջ 9

Խանասորի Արշաւանքին 120ամեակ. «Յուլիս ամսու 25-ին կատարեցէք մեր տօնը», էջ 10

Հարցազրոյց «Նոր Ծաղիկ» երգչախումբի խմբավար Էլիզապէթ Հարպոյեանի հետ.

**2017**  
**CR-V**  
 STARTING FROM  
**\$26,890\***



Image for illustration purposes only.

**HONDA**  
**GABRIEL**


7000, boulevard Henri-Bourassa E.  
 Montréal-Nord, QC H1G 6C4  
**514 327-7777**  
 www.hondagabriel.com  
 < OPEN SATURDAYS >

**Kevork Asadourian**  
**Vahan Vartanian**  
**Haig Khobasarian**



**HONDA**

\*Conditions apply. Taxes not included. Freight and air taxes not included. Limited time offer applicable on selected models only and subject to change or cancellation without notice. For more information, visit Honda Gabriel.



**ARZ**  
fine foods

the essence of mediterranean gourmet

*Authentic Food Experience*

## ARZ Fine Foods

You Can Find ARZ Products  
At Selected, Loblaws,  
Superstore, Fortinos,  
Wholesale Club, & NoFrills  
Stores

- Visit [arzfinefoods.com](http://arzfinefoods.com) for the latest promotions.
- You can also find us on Flipp
- For employment opportunities; Email your resume to [humanresources@arzfinefoods.com](mailto:humanresources@arzfinefoods.com)

# COME HEAR WHAT YOU HAVE BEEN MISSING



**TRY HEARING AIDS  
RISK-FREE**

**Call 416 754-4327**

699 Coxwell Avenue  
Toronto, ON M4C 3C1  
Tel: 416 463-4327(HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Road,  
#65 Toronto, ON, M1R 4B9  
Tel: 416 754-4327(HEAR)

[www.hearingaidsource.ca](http://www.hearingaidsource.ca)



- Free Hearing Tests
- No obligation Hearing Aid Trial
- Hearing Protection

Images copyright Oticon Canada Ltd.



## hearing aid source

*invisible, custom & comfortable*

# «Ժողովրդագրական Ծգնաժամին Ընդառաջ»

Բնակչության բնական աճն այն կարևոր բաղադրիչներից է, որն ապահովում է հասարակության բնականոն զարգացումը եւ հնարաւորութիւն է տալիս դրա հիման վրայ կատարել ուղղափարական կանխատեսումներ: Ոչ մի երկիր չի կարող ծրագրաւորել իր յետագայ սոցիալ-տնտեսական, քաղաքական եւ մշակութային զարգացումն առանց յստակ ժողովրդագրական քաղաքականութեան, որի նշանակութիւնը ժամանակակից աշխարհում գնալով աճում է:

Աշխարհի բազմաթիւ երկրներում գործում են ծնելիութեան խրախուսման բազմաթիւ ծրագրեր: ՀՀ-ում եւս գոյութիւն ունի ծնելիութեան խրախուսման 2016-2018թթ. միջնաժամկէտ ծրագիր, որի բաղադրիչներից մէկն էլ երրորդ երեխայի ծննդեան դէպքում 1 մլն. դրամով խրախուսումն է: Գործում է նաեւ ծննդաբերական սերտիֆիկատների (վկայագրեր-կրեմ-կարտ) տրամադրման քաղաքականութիւնը: Մշակուել է նաեւ նորաստեղծ ընտանիքներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագիրը, որը, սակայն, միջոցների սղութեան հետեւանքով դեռեւս չի գործում:

Ինչպէս ցոյց են տալիս խորհրդային տարիներին անցկացուած մարդահամարները, Հայաստանի բնակչութիւնը բնականոն աճ է գրանցել, որը տարեկան կտրուածքով կազմել է մօտ 1.5 տոկոս:

Այսպէս, անցեալ դարի 80ական թուականներին Խորհրդային Հայաստանի բնական աճի տեմպերը բաւականին բարձր էին, որի բարձրակէտը 1986թ. էր, երբ գրանցուեց 20րդ դարի Հայաստանի ժողովրդագրական դիտումների ամենաշատ ծնելիութեան ցուցանիշը՝ 81,192 երեխայ: Ըստ վիճակագրական տուեալների՝ 1985-1991թթ. Հայաստանում ծնուել էր 544,654 երեխայ:

Ծնելիութեան այս բարձր ցուցանիշը կտրուկ փոփոխուեւ է Հայաստանի անկախութեան առաջին տարիներից սկսած: Պատճառները սոցիալ-տնտեսական իրավիճակի կտրուկ վատթարացումն էր, Սպիտակի աղէտալի երկրաշարժը, շրջափակումը եւ Ղարաբաղի համար մղուող ազատագրական պատերազմը:

Եթէ 1992թ. Հայաստանում ծնուել է 70,581, 1997թ.՝ 43,929, ապա 2001թ. այդ թիւն իջաւ մինչեւ 32,065 երեխայի:

Ընդհանուր առմամբ, ՀՀ անկախութեան առաջին տասնամեակում ծնուել է 464,457 երեխայ, մահացութիւնը կազմել է 247,064 մարդ, իսկ բնական աճը՝ 217,443 մարդ:

Պէտք է նշել, որ 1992-2001թթ. նախորդ տասնամեակի համեմատ բնական աճը կրճատուել էր 5.3 անգամ: Բնակչութեան բնական աճի դինամիկան, սկսած 1992թ-ից, անընդհատ նուազել է, որն արտագաղթի հետ աւելի է ազդել բնակչութեան թուաքանակի փոփոխութիւնների վրայ:

Ծննդաբերութեան տարէջտարի նուազման պատճառները ոչ միայն պէտք է փնտռել վերարտադրողական տարիքի մարդկանց զգալի հատուածի բացակայութեամբ, այլեւ այդ ժամանակահատուածում հանրապետութիւնում առկայ սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակի խորապատկերին:

Սպասուեւ էր, որ 2001թ. Հայաստանում իր ամենացածր կէտին հասած ծնելիութիւնն աճ պէտք է գրանցեր, քանի որ ակտիւ ամուսնական տարիք էին մուտք գործում 20րդ դարի 70ական թուականների վերջի եւ 80ականներին ծնուած սերունդը, որոնց թիւը զգալիօրէն գերազանցում էր 60-70ականների ծնուածների թուին:

Ըստ կանխատեսումների՝ տարեկան պէտք է ծնուէին առնուազն 50-60 հազար երեխաներ: Սակայն այդ կանխատեսումները լիովին չարդարացան: Եթէ 2002թ. Հայաստանում ծնուել էր 32,380 երեխայ, ապա 2010թ. այդ ցուցանիշը հասաւ 44,800ի, իսկ արդէն 2011թ-ից սկսեց նուազել: Չնայած 2002-2011թթ. գրանցուած ծնունդների թուաքանակի աճին, այն 1992-2001թթ. համեմատ կրճատուել էր 1.2, իսկ բնական աճի ցուցանիշը 1.8 անգամ: Պատճառն այն էր, արտագաղթի հետեւանքով հայ երեխաների մեծ մասը ծնուել էր արտերկրում, իսկ դա բաւականին պատկառելի թիւ է կազմում: Եւ եթէ 20րդ դարի առաջին տասնամեակում Հայաստանում գրանցուէր միջինը 50-60 հազար ծնունդ, ապա դա կարող էր որոշակի կաշտուութիւն հաղորդել ժողովրդագրական գործընթացներին, որը 2011թ. սկսած միայն հետընթաց է արձանագրում:

Սակայն այս իրողութեան բացա-

կայութիւնը մօտակայ տասնամեակներում բացասաբար է ազդելու ժողովրդագրական գործընթացների վրայ: Հայկական ընտանիքը, որը 20րդ դարի 80ական թթ. միջինը բաղկացած էր 4.7 մարդուց, այսօր կազմում է ընդամէնը 3.3 մարդ: Վերջին տասնամեակում քիչ է այն ընտանիքների թիւը, որտեղ երեխաները քանակը անցնում է երեքից:

Խզուել է երեխաներ ունենալու յաջողակաւութիւնը: Եթէ մինչ անկախութիւնը դա կազմում էր 2-3 տարի, ապա ներկայումս 4-7 տարի: Իսկ երրորդ եւ աւելի երեխաներին շատ քիչ ծնողներ են ներկայումս գնում: Եթէ 1997թ. ծնունդների ընդհանուր թուաքանակում 24.7 տոկոսը եղել են 3 եւ աւելի ծնուած երեխաները, ապա 2015թ. տուեալներով այդ ցուցանիշը նուազել է մինչեւ 19 տոկոսի:

Բարեւք է նաեւ բնական վերարտադրութեան վիճակը: Վերարտադրողական տարիքում գտնուող կանայք ունենում են միջինում 1.6 երեխայ, այն դէպքում, երբ պարզ վերարտադրութեան համար անհրաժեշտ է ունենալ 2.1 երեխայ:

2011թ. Հայաստանում անցկացուած մարդահամարը ցոյց տուեց, որ էականօրէն վատթարացել են Հայաստանի բնակչութեան սեռատարիքային ցուցանիշները: Թէեւ 2001թ. համեմատ 2011թ. 0-4 տարեկանների խմբում մօտ 4 տոկոսի աճը խօսում էր ի նպաստ ծննդաբերութեան աւելացման, սակայն այդ ցուցանիշը 80 տոկոսով գիջում էր 1989 թուականին, որը խօսում է ժողովրդագրական խորը անկման մասին: 5-9 տարեկանների խմբում վիճակն աւելի անհանգստացնող էր: 2001-2011թթ. ընթացքում նրանց թիւը պակասել էր 80,542ով: Իսկ 10-14 տարեկանների մօտ այդ ցուցանիշն աւելի բարձր էր՝ 116,400 երեխայ: 15-19 տարեկանների թիւը նուազել էր 41,314ով:

Այս ժողովրդագրական իրավիճակը իսկապէս մտահոգիչ է, եւ մօտակայ տարիներին խնդիրներ է առաջ բերելու ինչպէս բանակի թուակազմի համալրման, այնպէս էլ հանրակրթական եւ բարձրագոյն ուսուցման համակարգում: Այսպէս, 2012թ. համեմատ 2019թ. բանակ զորակոչուող երիտասարդների թիւը կը

նուազի 30 տոկոսով, եւ դա այն դէպքում եթէ բացառենք արտագաղթը: Բարձրագոյն ուսումնական ոլորտում 2016թ. համեմատ 2017թ-ին դիմորդների թիւը նուազել է 1500ով եւ մօտակայ տարիներին այդ ցուցանիշը դեռեւս նուազելու է:

Ժողովրդագրական յաջող գաւալի խնդիրն այն է, որ Հայաստանում կտրուկ աւելացել է 60 եւ աւելի տարիք ունեցող մարդկանց թիւը: Եթէ 1979թ. նրանք կազմել են բնակչութեան 7.9 տոկոսը, 1989թ.՝ 9.2, ապա ներկայումս նրանց թիւն արդէն իսկ գերազանցում է 15 տոկոսը: Եթէ Հայաստանից շարունակուող արտագաղթը չզաղարի, եւ տեղի չունենայ ծնելիութեան ցուցանիշի աճ, ապա մօտակայ տասնամեակում 60 եւ աւելի տարիք ունեցող մարդկանց թիւը կը գերազանցի 20 տոկոսը, որը կը հասցնի նրան, որ Հայաստանը կ'ունենայ «ծերացող» հասարակութիւն, որը յղի է տնտեսական եւ սոցիալական անդառնալի հետեւանքներով:

Իսկ դա կարող է տեղի ունենալ նաեւ այն հանգամանքով պայմանաւորուած, որ ներկայ ժողովրդագրական ժամանակահատուածում ամուսնական ակտիւ տարիք են մուտք գործում նախորդ դարի 90ական թուականներէն ծնուած սերունդը, որոնց թիւը մօտ 40 տոկոսով աւելի քիչ է, քան 1980ականներին ծնուածներինը: Դրա ապացոյցն է նաեւ այն, որ 2016թ-ին 2012թ. համեմատ Հայաստանում ծնունդների թիւը նուազել է 4.6 տոկոսով, մահերի թիւն աւելացել է 2, իսկ բնական աճն պակասել է 6 տոկոսով: Ծնելիութեան յետագայ նուազումը եւ մահերի թուի աւելացումը կարող է յանգեցնել նրան, որ արդէն իսկ 2025թ. մահերը Հայաստանում կը գերազանցեն ծնունդներին եւ բնական աճը կ'ունենայ բացասական ցուցանիշներ: Այս հանգամանքը էլ աւելի կարող է խորացնել ժողովրդագրական բացասական վիճակը եւ արագացնել բնակչութեան թուաքանակի նուազումը:

ԱՐՏԱԿ ՄԱՐԿՈՍԵԱՆ  
Ժողովրդագէտ, Միջազգային եւ անվտանգութեան հարցերի հայկական ինստիտուտի (ՄԱՀՀ) փորձագէտ

**HAIG AFARIAN**  
Cell : 514.862-6779  
Bur : 514.360.3000 ext 1234  
haig.afarian@gmail.com  
effectuée par MALES ARCHITECTES-IPOTHECAIRES  
Charisma FINANCE  
3310 100e Avenue, bureau 350, Laval  
Québec H7T 0J7 • FAX: 514.313.5718

Groupe Sutton - Performer Inc.  
123 Place Frontenac  
Pointe-Claire, QC H9R 4Z7  
**ALBERT ARKILANIAN**  
Courtier immobilier résidentiel  
Residential Real Estate Broker  
aarkilianian@sutton.com  
Cell: 514.962.8822  
Bur: 514.426.9595  
Fax: 514.426.9596  
Satisfaction garantie ou je revends votre propriété gratuitement!  
\*certains conditions s'appliquent

NISSAN  
GABRIEL  
VÉHICULES D'OCCASION  
CERTIFIÉS  
HONDA  
GABRIEL  
**Kevork Asadourian**  
Directeur des ventes - usagé  
Sales Manager - Pre-Owned  
kasadourian@gabriel.ca  
7000, Henri-Bourassa E., Anjou (OC), H1G 6C4  
Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967  
www.nissangabriel.com • www.hondagabriel.com

**École De Conduite**  
AZIG Driving School  
Tel: 514-336-1110  
Moniteur-Instructeur  
AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM  
1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II  
Instruction Automatique ou manuelle

Personal & Corporate Tax Returns  
Financial Statements  
Bookkeeping  
Business Plan  
**NATALIE SKAFF, CPA, CGA**  
Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant  
nat.skaff@gmail.com  
Tel. (514) 963 3363  
2866 Rue De Chamonix  
Saint-Laurent, Québec  
H4R 3B7  
Services available in Armenian, Arabic, English and French

BRING YOUR OWN WINE  
**NAZARETH**  
CLASSIC GRILL  
550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6  
Tel: 450.937.4064  
Email: resto.nazareth@hotmail.com

**SAMUEL TOPALIAN**  
450 682-1644  
**AUTO SAMSON**  
MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE  
SERVICE DE PNEUS MISE AU POINT  
4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.

ՀԱՅԿ ՀԱՐՈՒՆԻԱՆ  
**Hayk Hartounian**  
Courtier immobilier résidentiel  
Residential Real Estate Broker  
C 514.574.6162  
B 514.333.3000

**NETTOYEUR**  
MARIE-CLAIRE  
CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE  
À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL)  
2535 de Salaberry, Montréal  
Tél: 514.334.7830

# Սփիւռք-Հայրենիք Համահայկական Ժողովի Նախօրէին

Սփիւռք-Հայրենիք յարաբերութիւններուն, փոխադարձ ճանաչողութեան, փոխանակումներուն 25 տարուան փորձառութիւնն ու արձանագրուած արդիւնքները ենթադրելի պիտի ծառայեն, բնականաբար, Հայաստան-Սփիւռք վեցերորդ համահայկական երկօրեայ ժողովի նախօրեակին քննարկումներ կատարելու եւ Սփիւռքի ու Հայրենիքի ներկայ իրավիճակներու լոյսին տակ նոր առաջարկներով հանդէս գալու:

Յետադարձ հայեացք մը նետելով սուրիահայութեան դիմաց պարզուած յատկապէս վերջին՝ պատերազմական տարիներու պատկերին վրայ, կրնանք հաստատել, որ պատերազմը պատճառ հանդիսացաւ, որ Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնները շատ աւելի արագ կշռոյթով զարգանան, երեւան հանելով մասնագիտական սերտօղութեան արժանի մէկէ աւելի երեւոյթներ:

Եթէ նախքան պատերազմը սուրիահայութեան նկատառելի մէկ տոկոսին համար, առանց բացարձակ ընդհանրացումներու երթալու, հայրենիքը միայն ոգեղէն ներկայութիւն էր, ուր զբօսաշրջութեան, հանգիստի, ուսանելու կամ համահայկական ժողովներու մասնակցութեան համար կարելի էր մեկնել ու բաւարարուիլ հայրենաճանաչութեամբ, աւելին՝ հայրենասիրական զգացումները գոյատեւման խթան ծառայեցնել եւ Արարատի հմայքին ու հայրենիքի քաղցր ջուրին համով լիանալ. եթէ հայ-

րենիքը ոգեղէն ներկայութիւն էր միայն, սուրբ ներկայութիւն մը, ուր ամէն բան վարդազոյն էր ու դիւրահաս, ապա պատերազմը պատճառ հանդիսացաւ, որ այդ մակերեսային նայուածքը կտրուկ վերիվայրում մը ապրի, զգացական մօտեցումները բախին իրականութեան պատին ու Հայաստանը որպէս անկախ պետութիւն, պետականութիւն ընկալելու գիտակցական վիճակը շատ աւելի արագ կշռոյթով ձեւաւորուի: Պետութիւն, որ ունի իր դժուարութիւնները եւ որուն զարգացման ու կայունացման մէջ իր ներդրումը կրնայ բերել ու պէտք է բերէ Սփիւռքը, ոչ թէ միայն հեռուէ հեռու զօրակցական կոչեր հրապարակելով ու տնտեսապէս օժանդակելով անոր, այլ նաեւ մասնակցելով, որովհետեւ հայկական մեր իրականութեան մէջ ամուր խորիւն մըն է անկախ Հայաստանը: Մասնակցութեան այդ եղանակը պիտի ըլլայ սերտելին: Մասնակցութիւն մը, որ սահմանափակ ներդրումէն անդին երթայ ու մեր պետութիւնը միասնաբար կառուցելու, զօրացնելու տրամաբանութեամբ օժտուի:

Մասնակցութիւն մը, որուն եզրերուն ճշդորոշումին մէջ դերակատարութիւն ունենայ սփիւռքահայ մասնագէտը, մտաւորականը նաեւ: Մասնակցութիւն մը, որ հիմնուի փոխադարձ իրատես ճանաչողութեան վրայ՝ հեռու զգացական մօտեցումներէ: Անցած են հայրենասիրական երգերով խանդավառուե-

լու ժամանակները: Հայ երիտասարդութիւնը, Սփիւռքի մէջ թէ հայրենիքի, կենդանի գործին, գործակցութեան հետ յոյսեր կը կապէ միայն:


Հայաստանի համար եւս սուրիական պատերազմը երկու իրավիճակ ստեղծեց. առաջինը պատերազմին իբրեւ հետեւանքով Հայաստան հաստատուող սուրիահայերուն աշխատանքի եւ կեցութեան յարմարութիւններու ապահովման անհրաժեշտութիւնն էր, սուրիահայ զաղթող մարդուծին ներգրաւումը նաեւ հայաստանեան միջավայրին մէջ: Երկրորդը՝ սուրիահայ գաղութի դիմադրողական ոգիին նպաստելն ու քաղաքական դաշտին վրայ այդ նկատառումներով հանդէս գալն էր, որպէս պետութիւն: Այս պատերազմը նպաստեց, որ Հայաստանն ու հայաստանցին աւելի լաւ ճանչնան սուրիահայը, սուրիահայն ալ՝ Հայաստանը, որպէս 25ամեայ պետական ներկայութիւն մը մեր կեանքին մէջ: Այս առումով պէտք է քննարկել, թէ որքանով կարելի եղաւ ճշգրտորէն

կառավարել պատերազմին յառաջացուցած այս նոր կացութիւնը:


Սուրիահայ գաղութին դիմադրողական ոգին գլխիվայր շրջեց նաեւ ընդհանրացած այն թիւր կարծիքը, որուն համաձայն պատմական մեր գաղութները ժամանակաւոր են, փխրուն ու կորստեան դատապարտուած: Փաստօրէն անոնք, ունենալով մէկտեղ գոյերթի պահպանման լուրջ մարտահրաւէրներ, դժուարութիւններ ու թոյլ կողմեր, ընդունակ են պահպանելու իրենց գոյութիւնը, սակայն կը մտածենք այդ գոյութիւնը երկարաճեող որակաւոր մարդուծի պատրաստութեան կարեւորութեան մասին, իսկ Հայաստանը որքանով կրնայ սատարել այդ պատրաստութեան:

Փափաքելի պիտի ըլլայ, որ այս ժողովը խորքային քննարկումներու եւ նոր գործելաձեւի որդեգրման առիթ հանդիսանայ, ի շահ հայրենիքին ու Սփիւռքին, ոչ թէ անոնցմէ մէկուն՝ միւսին հաշուոյն:


ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ԳԱՆՁԱՍԱՐ»Ի

 Այցելեցէք Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցի կայքէջը՝ [www.sourphagop.org](http://www.sourphagop.org)

 2եր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ **(514) 284-7676**  
**ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊՐ ԼԱՅԱՍՏԱՆ...**  
**ԼԱԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ**  
PERMIS DE QUÉBEC  
3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

  
**Պտոյտ դէպի Գեմայրիճ**  
8, 9, 10 Սեպտեմբեր 2017  
Կազմակերպութեամբ ՀՕՄ-ի Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղի Ընկերային Յանձնախումբին  
Խումբը պիտի այցելէ Թորոնթօ, Կիակարայի ջրվեժներ եւ Գեմայրիճ՝ Ուր պիտի նշուի Սուրբ Խաչի տօնը  
Մանրամասնութեանց համար հեռաձայնել հետեւեալ ընկերուհիներուն՝  
Երան: 514-331-1404 Շէլէն: 514-334-9251  
Լինա: 514-272-5858

ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄՈՒԹԵԱՆ ՊԱՊԱՅԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷՋ ԳՈՒՈՒԵԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ ԼԱՓՈՅԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ

 ARMENIAN RELIEF SOCIETY  
BABAYAN KINDERGARTEN  
KOLOLIAN ELEMENTARY  
LAPOYAN HIGH SCHOOL

**Հ.Օ.Մ.-ի Ամէնօրեայ Վարժարանը կ'ընդունի մանկամտօրի ուսուցչական եւ օգնականի պաշտօնի դիմումագրեր:**

Թեկնածուն պէտք է

- Ունենայ Early Childhood Education (ECE) կամ Early Childhood Assistant (ECA) վկայականը
- Եթէ ECE ունի, անդամ ըլլայ College of Early Childhood Educators-ի
- Կարենայ աշխատիլ 18 ամսականէն 5 տարեկան երեխաներու հետ
- Սահուն Հայերէն խօսի

Հաճեցէք ձեր ինքնակենսագրականները (Resume) ուղարկել՝ [jobs@arsdayschool.ca](mailto:jobs@arsdayschool.ca) հասցէին մինչեւ 11 Օգոստոս 2017:

50 Hallcrown Place, Willowdale, Ontario, M2J 1P6,  
Tel: (416) 491-2675, Fax: (416) 491-8559  
[www.arsarmenianschool.ca](http://www.arsarmenianschool.ca)

# Լեւոն Մնացականեան. «Եթէ Նոր Յարձակում Ըլլայ՝ հայկական Կողմը Պիտի Անցնի յակայարձակման»

«Այսօր կրնանք վստահօրէն ըսել, որ մենք առաջնագիծին վրայ չունինք գոնէ մէկ հատուած, որ կը դիտարկուի թշնամիին կողմէ», այս մասին Հայաստանի հանրային պատկերասփիւռի կայանի «Օրակարգից դուրս» հաղորդման ժամանակ յայտարարեց Արցախի պաշտպանութեան նախարար, պաշտպանութեան բանակի հրամանատար Լեւոն Մնացականեան:

Ան նաեւ նշեց, թէ միանշանակ կրնանք փաստել, որ հետախուզական ներթափանցման փորձեր այլեւս չեն իրականացուիր թշնամիին կողմէ:

Ան նաեւ վերահաստատեց այն յայտարարութիւնը, որ անկախ անկէ, թէ ո՛ր տեղակայուած է թշնամիին կրակակէտը, եթէ կրակ բացուի մեր յառաջապահ ստորաբաժանումներուն վրայ՝ պատասխան պիտի ստանան:

Պաշտպանութեան բանակի հրամանատարը նաեւ յայտարարեց, որ եթէ նոր յարձակում ըլլայ՝ հայկական կողմը պիտի անցնի հակադարձակողական գործողութիւններու՝ թշնամիին հասցնելով ջախջախիչ հարուած:

Նախարար Լեւոն Մնացականեան անդրադարձած է սպառազինութեան եւ զինուորական հաւասարակշռութեան խնդիրներուն:

Նախարարին համաձայն, Ազրայէյճանի կողմէ սպառազինութեան գնումներէն անկախ՝ ուժերու հաւասարակշռութիւնը երբեք չէ խախտած ու պիտի չխախտի: Հաւասարակշռութիւնը խախտած է 1992-ին, եւ այն ժամանակ իրենք ունէին բացարձակ առաւելութիւն բոլոր զինատեսակներով: Եւ այդ պայմաններուն մէջ չկրցան կատարել իրենց առջեւ դրուած խնդիրները:

«Ունեցանք այն, ինչ որ արձանագրուեցաւ 1994-ի մայիսին: Փորձը ցոյց տուած է, որ ազրայէյճանական բանակը իր զինատեսակներու կիրարկման արդիւնաւէտութեան մասով լուրջ խնդիրներ ունի, որուն գծով համոզուեցանք նաեւ 2016-ի ապրիլեան գործողութիւններուն ժամանակ», ըսաւ ան:

Լեւոն Մնացականեան նշեց, որ ապրիլին թշնամին կիրարկած էր լաւագոյն արդի ժամանակակից զէնքեր: Գոր-

ծածուած են «Սմերչ» համակարգեր, կիրարկուած են հրանետային համակարգեր՝ «ԹՈԳ-1», խորայնակալ, թրքական համազարկային «Գասիրկա» Թ-300 հրթիռային միջոցները նաեւ անօդաչու թռչող սարքեր, որոնց մէկ մասը ճշգրիտ խոցման միջոցներ են: Սակայն հակառակորդը ունեցած է ընդամենը մասնակի յաջողութիւն տուեալ ուղղութիւններուն վրայ: Ատիկա կը յուշէ, որ հակառակ ձեռքերումներուն, այնուամենայնիւ, իրենք հարց ունին կիրարկման եւ այդ զինուորական սարքերու գործածութեան առումով:

Ըստ նախարարին, մէկ անգամուան ուսուցումը չի նշանակեր, որ ստորաբաժանումը կամ զօրամասը պատրաստ են զինատեսակը արդիւնաւէտ ձեւով կիրարկելու:

2016-ի ապրիլեան պատերազմի օրերուն Ազրայէյճանի բանակը, այսպէս կոչուած «052 Եաշմա» յատուկ նշանակութեան ընտրանիներու զօրամասէն միայն 400-է աւելի զոհ ունեցած է:

«Իրենց զիւղները, որ փոխանակած ենք, եղած է փաստաթուղթ, ուր նշուած է «Եաշմա»-ի 052 զօրամասէն 71 կամ 72-ը խումբը: Ատիկա ենթադրել կուտայ, որ «Եաշմա» զօրամասի 1000-ը զինուորը գտնուած է զինուորական գործողութիւններու մէջ եւ ոչնչացուած է: Այսինքն՝ զօրամասը լրիւ կազմով ընդգրկուած եղած է հիւսիսային ուղղութեան մարտական գործողութիւններուն մէջ: Հակառակ անոր, որ իրենք կը յայտարարեն, որ չեն յարձակած», ըսաւ պաշտպանութեան նախարարը:

Նախարար Լեւոն Մնացականեան խօսելով շփման գիծի երկայնքին տարուող ճարտարագիտական եւ կահուածան աշխատանքներու մասին, նշեց, որ իրականացուած են հսկայական ծաւալի աշխատանքներ թէ՛ առաջնագիծին, թէ՛ կրակային դիրքերուն, թէ՛ կեդրոնացման շրջաններուն մէջ՝ շփման գիծի ամբողջ երկայնքին: Ուշադրութեան կեդրոնը եղած են առաջնային գիծն ու յենակէտերը, ուր տեղադրուած են լրացուցիչ ծածկեր, բարելաւուած են խրամուղիները, հաղորդակցման ուղիները: Բարձրացած է առաջնային գիծին մէջ զինուոր-

ներու մարտական հերթապահութեան անվտանգութիւնը:

«Առաջնագիծին մէջ չունինք գոնէ մէկ հատուած, որ կը դիտարկուի հակառակորդին կողմէ: Վստահ կրնանք ըսել, որ անկախ կրակային միջոցէն, մենք բոլոր պայմաններուն մէջ՝ ըլլայ ցերեկ թէ գիշեր, կրնանք արդիւնաւէտ կրակ վարել: Մենք լուրջ քայլերու ձեռնարկած ենք կրակային միջոցներու համակարգերու կարելիութիւնները ընդլայնելու ուղղութեամբ», ըսաւ պաշտպանութեան բանակի հրամանատարը:

Փորձած են կարելիութիւնները ընդլայնել յատկապէս տեսադիտարկման աշխատանքներու եւ կրակային խոցման միջոցներու ուղղութեամբ: Եւ եթէ նախապէս սահմանափակ պայմաններու մէջ կային խնդիրներ, ապա հիմա վստահ կրնանք ըսել, որ անկախ կրակային միջոցէ, բոլոր պայմաններուն մէջ, կրնանք արդիւնաւէտ կրակ վարել: Բացի անկէ, աւելցուցած են ղեկավարման կարելիութիւնները, ձեռք ձգած են նոր միջոցներ, ինչպէս հետախուզական, այնպէս ալ՝ կրակային: Իրականացուած են այդ բոլոր միջոցներու փորձարկումներ, որոնց արդիւնքները յուսադրող են եւ արդիւնաւէտ:

Պաշտպանութեան բանակի հրամանատարը ընդգծած է, թէ յատկապէս ուշադրութիւն դարձուցած են թշնամիին գործողութիւններուն կանուխ յայտնաբերման միջոցներուն վրայ: Ատիկա, ըստ նախարարին, առաջնային գիծին մէջ զինուորներու անվտանգութեան ապահովման հիմնական նախապայմաններէն մէկն է, եւ արդէն կարելիութիւն ունին նախօրօք գիտնալու հակառակորդին հաւանական գործողութիւններուն վերաբերեալ, կրակային դիրքերու տեղակայման վերաբերեալ:

Ձեռք բերուած են արդի արհեստագիտութիւն պարունակող կրակային միջոցներ: Արցախի պաշտպանութեան բանակը ունի խոշոր տրամաչափի կրակային միջոցներ, որոնք նախապէս չեն եղած, կան աւելի հեռահար հակազրահապատային կրակային միջոցներ, որ նախապէս ունեցած են, բայց ոչ բաւարար մակարդակով, ձեռք ձգուած են նաեւ

արդի արհեստագիտութիւն պարունակող կրակային միջոցներ: Կը կատարուի անձնակազմի ուսուցում՝ կիրարկման հետ համահունչ օգտագործելու համար:

Նախարար Լեւոն Մնացականեան, անդրադառնալով Ձաքիր Հասանովի յայտարարութեան, որ կը խօսէր ապրիլեան պատերազմի օրերուն միայն իրենց բանակի 15-20 տոկոսը օգտագործելուն մասին, բացայայտեց, թէ ատիկա ի՞նչ կը ներկայացնէ նշեալ տոկոսէն:

«Փորձենք հասկնալ այդ 15-20 առ հարիւր կազմը ինչ կը ներկայացնէ: Ազրայէյճանի զինուած ուժերուն 15-20 առ հարիւրը կը ներկայացնէ զրահապատներ եւ հետեւակի մարտական մեքենաներ, մինչեւ 250-300 հատ զրահապատ եւ ականանետ՝ մինչեւ 45-500 հատ: Համազարկային հեռահար համակարգեր՝ արդի եւ մեծ տրամաչափի մինչեւ 60 հատ, հակազրահապատային միջոցներ մինչեւ 600-700 հատ եւ անձնակազմ՝ մինչեւ 20.000 եւ ինքը այդ մասին հպարտութեամբ կը խօսի: Այդքանը իրենք գործածած են ապրիլեան գործողութիւններուն ընթացքին եւ ունեցած են միայն մէկ վաշտի մարտական խնդիրն համահունչ յաջողութիւն: Իսկ ինչ կը վերաբերի «Իսքանտեր»-ին ու նման վերաբերմունքին, ես պիտի ըսի հետեւեալը: Մարդ մը, որ ուշադրութեան չ'արժանացներ նման հրթիռ, որուն կշիռը մօտաւոր 4 թոն է, որուն մարտական մասը մինչեւ 480 քիլոկրամ է, կրակի ճշգրտութիւնը միայն քանի մը մեթր, եւ հեռահարութիւնը քանի մը հարիւր քիլոմեթր, անտեսել նման միջոց կա՞մ միամտութիւն է, կա՞մ իրապէս գործէն անտեղեակ մարդու տպաւորութիւն կը ձգէ վրաս: Եւ թէ ինչ միջոցով պիտի ոչնչացնէ «Իսքանտեր»-ը, կը յայտարարէ, թէ ինչպիսի՞ հրթիռներ ունին իրենք: Բայց ատիկա ի՞նչ նշանակութիւն ունի, թէ ինչ հրթիռներ ունին: Ամէն բնոյթի նշանակէտի համար գոյութիւն ունի իր հրթիռը, եւ ուր անհրաժեշտ է իր հրթիռը արձակուելու, կը կարծեմ՝ ատիկա միամտութիւն է: Կերեւի, վախի զգացողութեամբ կատարուած յայտարարութիւն է»:

**Ghadir Meat & Restaurant**  
 T. 416-750-7404  
 F. 416-750-7400  
 1848 Lawrence Avenue E.  
 Scarborough, ON M1R 2Y4  
 E-mail: info@ghadirmeatmarket.com

**ANI BAKERY AND FINE FOODS**  
 OPEN 7 DAYS A WEEK!  
 WEDNESDAY 9 AM - 7 PM  
 SATURDAY 8 AM - 4 PM  
 SUNDAY 8 AM - 3 PM

**LOCATION: 2094 LAWRENCE AVENUE EAST**  
 ON THE NORTH-EAST CORNER OF LAWRENCE AND WARDEN

**Noor Fine Food**  
 Gourmet Mediterranean Cuisine

1 High Meadow Place, Unit 9  
 Toronto, Ontario M9L 2Z5  
 Tel 416 745 3111  
 Fax 416 745 9337

**ANI Restaurant**  
 905.761.6484  
 1450 Clark Ave. West,  
 Thornhill ON L4J 7R5

**Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage**  
 1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0

**Annie Varbedian**  
 Sales Representative  
 Direct: (416) 918-3615  
 Office: (416) 739-7200  
 Fax: (416) 739-9367  
 annievarbed@hotm.com  
 www.suttongroupadmiral.com

**hearing aid source**

**Andre Ayzvazyan HIS B.A.S**  
 andre@HearingAidSource.ca  
 416 754 4327 (HEAR)

Partway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

**Crown Pastries**  
 Fine Middle Eastern Pastries  
 2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)  
 Toronto ON. M1R 2Z5  
 Tel 647.351.2015  
 www.crownpastriesbaklava.com

**I.D.A.**  
 Part of the **Bozell** family of pharmacies.

Pharmacists  
**Sarkis Balian**  
**Vartan Balian**  
**Maral Abdalian Balian**

**Cassandra Pharmacy Inc.**  
 2040 Victoria Park Ave.  
 Toronto, Ontario  
 M1R 1V2  
 Tel. : 416.449.2040  
 Fax: 416.449.2048

**ANI BAKERY**  
 ԱՆԻ ՓՈՒԱՊԱՆ

**Middle Eastern Pizza Lahmajoun**  
**ARSEN DABBAGHIAN**

25 Howden Road, Unit #2  
 Scarborough, Ontario M1R 3C8  
 Tel: 416.285.7164

## Մոնթրեալահայ Փէտրո Ուդուրլեան Գանատայի վերելակներու հայթաթիչներու համագործակցութեան նախագահ

Յունիս 7-ին Գանատայի Գոլինկվուտ քաղաքին մէջ կայացաւ Գանատայի վերելակներու հայթաթիչներու ընկերակցութեան (CECA - Canadian Elevator Contractors Association) ժողովը, որուն ընթացքին ընկերակցութեան նախագահ ընտրուեցաւ Մոնթրեալի Adams վերելակներու սարքաւորման համանախագահ Փէտրո Ուդուրլեան: CECA ունի 200-է աւելի անդամներ: Փէտրո Ուդուրլեան տարիներով ծառայած է Մոնթրեալի ՀՄԸՄ-Կամքի շարքերուն մէջ իբրեւ տիպար ՀՄԸՄ-ական:



## Գանատայի Ժառանգութեան եւ Բազմամշակութայնութեան նախարարի խորհրդարանական քարտուղարը այցելեց Գեմպրիճի հայ կեդրոն



Ուրբաթ, 21 Յունիս 2017-ին, Գանատայի Ժառանգութեան եւ Բազմամշակութայնութեան նախարարին խորհրդարանական քարտուղար, երեսփոխան Արիֆ Վիրանի աշխատանքային յատուկ այցելութեամբ մը ներկայ գտնուեցաւ Գեմպրիճի Հայ կեդրոն, ուր հանդիպում մը ունեցաւ Հայ Դատի Շրջանային յանձնախումբի պատուիրակութեան հետ: Հարկ է նշել, որ երեսփոխան Վիրանիի կ'ընկերակցէին երեսփոխաններ Պրայըն Մէյ եւ Ռաֆ Սայինի:

Աւելի քան մէկ ժամ տեւած հանդիպման ընթացքին երեսփոխանները առիթ ունեցան աւելի մտէն ծանօթանալու շրջանի գործունէութեան եւ Հայ Դատի առնչուող կարգ մը հարցերու:

Հանդիպման ընթացքին կողմերը հիմնականօրէն քննարկեցին Հայ Դատի յանձնախումբի յառաջիկայ կարգ մը նախաձեռնութիւնները, անոնց նկատմամբ կառավարութեան աջակցութիւնը ապահովելու հնարաւորութիւնները, Գանատա-Հայաստան յարաբերութիւնները զարգացնելու հեռանկարներն ու յետայսու ցեղասպանութեանց յիշատակման ամիսը աւելի մեծ շուքով ոգեկոչելու ծրագրերը:

Հարկ է նշել նաեւ, որ նոյն օրուան յետմիջօրէին, Գանատայի կառավարութեան նախաձեռնութեամբ եւ նախարար Պարտիշ Չակըրի եւ երեսփոխաններ Արիֆ Վիրանիի, Պրայըն Մէյի, Ռաֆ Սայինիի եւ Մարուան Թապպարայի հովանաւորութեամբ, Գեմպրիճի Իսլամական կեդրոնէն ներս տեղի ունեցաւ կլոր սեղանի խորհրդակցական հաւաքոյթ մը, որուն նաեւ իր մասնակցութիւնը բերած էր Հայ Դատի Շրջանային յանձնախումբի պատուիրակութիւնը: Խորհրդակցական հանդիպման ընթացքին տարբեր համայնքներէ ժամանած ներկայացուցիչներ կառավարութեան ներկայացուցիչներուն փոխանցեցին իրենց յուզող շարք մը հարցեր, որոնց վերաբերեալ նախարարն ու երեսփոխանները խոստացան կառավարութեան փոխանցել համապատասխան յանձնարարականները:

Լուսանկար. Չախէն՝ ընկ. Վրէժ Գասամանեան, Պրայըն Մէյ, Արիֆ Վիրանի, Ռաֆ Սայինի, ընկ. Սեւակ Պէլեան:

## ՀՄԸՄ Լաւալ մասնաճիւղի կազմակերպած փոքրերու եւ պատանհներու «Խաղի օր»ը



Կազմակերպութեամբ ՀՄԸՄ Լաւալ մասնաճիւղի Գայլ-արծուիկ միաւորի, 24 Յունիս 2017-ին տեղի ունեցաւ «Խաղի օր», Լաւալի Հայ կեդրոնի «Պարտնեան» սրահէն ներս, որուն իրենց մասնակցութիւնը բերին ՀՄԸՄ Լաւալ մասնաճիւղի գայլիկներն ու արծուիկները: Ներկայ փոքրիկներն ու պատանհները խաղացին շատ հաճելի խաղեր եւ հիւրասիրուեցան համեղ կարկանդակներով, պտուղի հիւթերով եւ խնձորներով:

Անոնք սորվեցան նաեւ ՀՄԸՄ-ական «Գայլիկներ ենք» կանչը եւ աւարտին բարձր տրամադրութեամբ վերադարձան իրենց բնակարանները կրկին հանդիպելու խոստումով:

ՀՄԸՄ Լաւալի Վարչութիւն

Այցելեցէք <b>hitunes.ca</b> կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցէք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը	Ունկնդրեցէք <b>triktrak.ca</b> կայքէջի հայկական համացանցային ռատիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հինգշաբթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցէք շահեկան հարցազրոյցներ
<b>HITUNES.CA</b>	<b>TRIKTRAK.CA</b>

**ALINE BEKEREJIAN**  
NOTAIRE • NOTARY

**ՆՈՏԱՐ Ալին Պեքերճեան**

Achat	Առեւտուր	Purchase
Hypothèque	Անշարժ Կալուածք	Mortgage
Refinancement	Վերաֆինանսաւորում	Refinance
Mandat	Պատուի	Mandate
Testament	Կտակ	Will
Succession	Կալուածք	Estate
Marriage	Ամուսնութիւն	Marriage
Procuratoin	Փոխանորդագիր	Power of Attorney

180, rue Fleury ouest  
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222  
F 514.381.1818

aline.b@notarius.net  
www.abnotaires.com

Շաապայութիւնները կը մատուցուին Արաբերէն, Գայերէն, Ֆրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:

Services offerts en Arabe, Arménien, Français et Anglais  
Services offered in Arabic, Armenian, French and English.

**ԳՈՐԾԻ ԱՌԻԹ**

Դերձակութեան "Arthur Montreal"  
հաստատութիւնը կարիքը ունի դերձակներու,  
կարողներու եւ ձեռողներու: Հետաքրքրուողները  
կրնան հեռաձայնել 514-843-0522 թիւին:

**TAILORS & SHIRT MAKERS NEEDED**  
"Arthur Montreal" Bespoke Tailors & Shirt Makers  
are looking for experienced seamstress, cutters  
and tailors. If interested, please call 514-843-0522.

**ՀՕՄ-ի Մոնթրեալի ընկերային ծառայութեան գրասենեակը կ'աջակցի Գանատա Ներգաղթած սուրիահայերուն**

ՀՕՄ-ի Մոնթրեալի Ընկերային Ծառայութեան գրասենեակի հիմնական առաքելութիւնը Մեծ Եւրոպայի հայութեան ընկերային կարիքներուն հասնիլն է, շեշտը դնելով կարիքաւոր անհատներու եւ ընտանիքներու վրայ: Իսկ վերջին շրջանին մեծ աշխատանք կը տարուի Գանատա նորահաստատ սուրիահայ ընտանիքներուն օգտակար հանդիսանալու համար: Մեր գործունէութիւնը կ'ընդգրկէ տեղեկատուութիւն, ներգաղթողներու աջակցութիւն, տարեցներու եւ կարիքաւորներու օժանդակութիւն:

- Կ'օգնենք դիրացնելու անոնց համարկումը (intégration) եւ երկրի օրէնքներուն, սովորութիւններուն եւ քաղաքացիական իրաւունքներուն ու պարտաւորութիւններուն ծանօթացումը:
- Կ'ամբողջացնենք կառավարական փաստաթուղթերը դաշնակցային եւ նահանգային մակարդակներու վրայ: Allocation familiale, crédit d'impôt pour les nouveaux arrivants:
- Նորեկները կ'արձանագրենք ֆրանսերէնի դասընթացներու:
- Կ'ընկերակցինք զանազան ժամադրութիւններու եւ կը միջամտենք աշխատանք գտնելու կապակցութեամբ:
- Նոր ժամանած եւ տակաւին նոր հաստատուող ընտանիքներուն կը տրամադրենք խոհանոցային իրեր:
- La Corbeille գանատական բարեսիրական կազմակերպութեան հետ յատուկ համաձայնութեամբ զեղչուած գիներով ուտեստեղէն կ'ապահովենք կարիքաւոր ընտանիքներուն:

**Գինգաբթի օրերը ժամը 12:00Էս - 4:00**  
**Հասցէ՝ 3401 Olivar Asselin, Montreal, Qc H4J 1L5**  
**Հեռաձայն՝ 514 514-335-2222**





# ՌԻՄՄԱԻՌՐԻՉ

## ԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ



Ա. ՏԱՐԻ ԹԻԻ 9

ՕԳՈՍՏՈՍ  
AUGUST / AOUT  
YEAR / ANNÉE 1  
NO.9 2017

ԱՌԱՋՆՈՐԴԻ  
ԽՕՍԳ

ԱՆԳԻՆ ՄԱՐԳԱՐԻՏ



ԲԱԲԳԷՆ ԱՐԹԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ՝  
Գանատայի Հայոց Թեմի

Ս. Աստուածածնի Վերափոխման տօնն է. տօն մը, որ առիթ կու տայ մեզի մտածելու Ս. Կոյս Մարիամի մասին, անդրադառնալու անոր կեանքին եւ յատկապէս անոր ունեցած դերակատարութեան մասին ընդհանրապէս քրիստոնէական եկեղեցիներու եւ մասնաւորաբար Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցոյ մէջ:

Տիրոջ հրեշտակի աւետման առաջին վայրկեանէն Ս. Կոյս Մարիամը դարձաւ ամենօրինեալը բոլոր կիներուն մէջ, որովհետեւ Ս. Հոգիով պիտի յղանար եւ որդի մը ծնէր, Անոր անունը Յիսուս պիտի դնէր, որ պիտի դառնար աշխարհի Փրկիչը: Տակաւին Յովհաննէս Մկրտիչի մայրը՝ Եղիսաբէթը, երբ առաջին անգամ հանդիպեցաւ Ս. Կոյս Մարիամին, ողջունեց զայն ըսելով. «Օրհնեալ ես դուն կիներուն մէջ, եւ օրհնեալ է պտուղը քու որովայնիդ»: Մէկ խօսքով Ս. Կոյս Մարիամը արժանի դարձաւ աստուածային ընտրութեան: Ան ընտրուեցաւ դառնալու մայրերու մայրը, բոլոր կիներուն մէջ: Ան դարձաւ տիպար օրինակը բոլոր կիներուն եւ ցոյց տուաւ, որ իրենց միակ կոչումը մայրութիւնն է:

Երբ կը խօսինք Ս. Կոյս Մարիամի մասին, անպայմանօրէն մեր մտքի պաստառին առջեւ կը տողանցեն քանի մը ճշմարտութիւն.

ա) Ս. Կոյս Մարիամը դարձաւ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ: Ան ծնաւ Աստուածորդին, որ եկաւ աշխարհ՝ մարդուն հետ ըլլալու, մարդուն ուղղութիւն տալու, անոր ձեռք երկարելու եւ մանաւանդ՝ օգնելու:

բ) Ս. Կոյս Մարիամը դարձաւ ԱՍՏՈՒԱԾՄԱՅԻՐ: Յիսուս Քրիստոսի ծնունդէն մինչեւ խաչելութիւն Անոր հետ եղաւ, որպէս մայր հետեւեցաւ Անոր քայլերուն, սակայն միշտ օգնեց, որ Ան յաջողի իրագործել Իրեն վստահուած առաքելութիւնը:

գ) Ս. Կոյս Մարիամը դարձաւ ԱՆՕԹ ՓՐԿՈՒԹԵԱՆ: Ան պատճառ դարձաւ, որ իր միջոցով իրագործուի փրկութեան խորհուրդը, որովհետեւ Յիսուս խոնարհեցաւ Իր աստուածային բարձրութենէն, որպէսզի մարդը առաջնորդէ դէպի փրկութիւն:

դ) Ս. Կոյս Մարիամը դարձաւ ԲԱՐԵՅՕՍ: Ան բարեխօս դարձաւ իր Որդիին մօտ: Անոնք որոնք կը դիմեն իրեն եւ կամ կ'աղօթեն իրեն, կ'ուզեն, որ ան բարեխօսէ Յիսուս Քրիստոսի իր որդիին Աստուծոյ Որդիին:

Յիսուս խոստացած էր իր մայրը երկինք փոխադրել, եւ այդպէս եղաւ. Ս. Կոյս Մարիամը երկինք փոխադրուեցաւ եւ գտաւ իր արժանի տեղը:

Այսօր եւս մենք պէտք ունինք վերափոխուելու, վերափոխելու մեր կեանքը եւ վերածելու զայն աստուածահաճոյ կեանքի:

Մեր շարականագիր վարդապետներն ու բանաստեղծները որքան գեղեցիկ կերպով կը բնորոշեն Ս. Կոյս Մարիամը. զայն կը նմանցնեն «Անթառամ ծաղիկ»ի եւ «Խնկի ծառ»ի: Ուրիշ տեղ մը կ'ըսեն. «Դուն ԼՈՒՍԵՂԷՆ ՏԱՃԱՐ ես, ՈՍԿԵՊՍԱԿ ԽՈՐԱՆ ես, դուն ՄԱՐԳԱՐԻՏ ԱՆԳԻՆ ես»:

Ահաւասիկ Վերափոխման տօնի իմաստն ու խորհուրդը, զորս պէտք է գիտնայ իւրաքանչիւր քրիստոնէայ եւ մանաւանդ՝ իւրաքանչիւր հայ:

### Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ



Ինչո՞ւ Ս. Կոյս Մարիամը «ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ» կը կոչուի:

Նախ յստակեցնենք, որ հայ հաւատացեալները Ս. Կոյս Մարիամը չեն պաշտեր, ինչպէս կ'առարկեն ոմանք եւ մեղք կը համարեն այդ արարքը:

Մենք միայն զԱստուած կը պաշտենք: Սակայն, Ս. Կոյսը մասնաւոր յարգանքի արժանի է, որովհետեւ Աստուած զայն ընտրեց Իր Միածին Որդիին ծննդեան համար: Ահա թէ ինչպէ՛ս Ս. Մարիամը «Աստուածամայր» դարձաւ եւ իրաւամբ Աստուածածին կոչուեցաւ: Այս իսկ պատճառով ան միւս արարածներէն վեր է, եւ նոյնիսկ ինք կը նախատեսէ, թէ «Այսուհետեւ բոլոր սերունդները ինձի երանի պիտի տան» (Ղկ 1.48):

Յիսուս Քրիստոս, յալիտենական Աստուածը, Ս. Կոյս Մարիամի միջոցով մարդացաւ, մարդկային բնութիւնը հագաւ: Արդ, երբ Ս. Մարիամ ծնունդ տուաւ եւ սնուցանեց Աստուածորդին, արդարօրէն արժանացաւ «Աստուածամայր» կոչումին. անշուշտ, ասիկա չի նշանակեր, թէ ան Հօր Աստուծոյ մայրն է: Անոնք որոնք կասկածի տակ կը դնեն Յիսուս Քրիստոսի աստուածութիւնը, կը մերժեն նաեւ Ս. Մարիամի աստուածամայրութիւնը:

Հետեւաբար, ո՛չ մէկ հեթանոսական սովորութիւն պէտք է տեսնել Աստուածամօր հանդէպ մեր ցուցաբերած մասնաւոր յարգանքին մէջ, ինչպէս ոմանք կը պնդեն:

### ՄԻՇՏ ԱՂՕԹԵՆՔ

Օրհնութիւն ընտանիքներու համար

Օրհնէ իւրաքանչիւր ընտանիք, որ ներկայ է հոս, զարմանահրա՛շ Աստուած, անոնց միշտ յիշեցուր, որ Քեզի կը պատկանին: Սուրբ Հոգին որկէ իւրաքանչիւր ընտանիքի անդամին, պզտիկ թէ մեծ, որպէսզի Քու ներկայութիւնդ զգալով Քու հովանիիդ տակ ապրին.

Ամէն:



# ՀՈԳԵԻՈՐ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

## ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

Չօն Աստուածածնայ Ուխտին Առթիւ

## ՅՈՅՄԻ ԲԱՐՁՐՈՒՆՔԸ

1952 թուականը սփիւռքահայ տարրին համար նոր էջ մը բացաւ: Էջ մը, որուն վրայ արձանագրուած կոյս տողերուն օրհնութիւնը հանդիսացաւ Աստուածածնայ ուխտագնացութեան օրհնաբեր ու վերածնունդի յոյսի լոյսով լեցուն Սուրբ աւանդութիւնը: Աստուածածնայ Մատրան հիմնադրումին յաջորդող այս աստուածահաճոյ սովորութիւնը սփիւռքահայութեան համար վերածուեցաւ ամենավսեմ տօնախմբութիւններէն մէկուն: Իւրաքանչիւր հայ իր հոգիին պարտականութիւնը համարեց, այս սուրբ օրով, անգամ մը եւս իր հայեացքը դէպի անցեալ դարձնել եւ անցեալի արցունքներով ողորդուած «Հի՛ն օրերու» ցաւերը ներկայի արգասաբերութեան ու ապագայի լաւատես յաջողութիւններով թարմացնելու լաւագոյն առիթը:

Շատ շատեր իրենց սրտին խորքը փափաք մը, իսկ ուրիշներ իրենց հոգին ճնշող ու խիղճերնին ծանրացնող «Բեռն» մը ձեռքազատուելու համար կը բաձրանան Հայոց այս Նոր Գողգոթան, որմէ ճաճանչող ճառագայթներէն թարմացած հոգիներով, յագեցած սրտերով եւ փրկութեան յոյսով վերածնած իրենց վայրէջքը կը կատարեն դէպի ալեկոծ աշխարհ...: Աստուածամայրն է, որ իր մայրութեան գուրգուրալից հպումներով կը ներթափանցէ իւրաքանչիւր ուխտաւոր հայորդիի ալեկոծ հոգիին խորքերը եւ իրմէ ծնած Աստուածորդիին՝ մեր Փրկիչին խաղաղութիւնը կը հաստատէ անոր ներսիդին: Հայու Նոր Գողգոթան, Պիքֆայայի բարձրունքներուն վրայ Աստուածամօր բարեխօսութիւնը հայցողներու փրկութեան Գողգոթան է, ուր աներեւոյթ ներկայութեամբ բարձրացած Քրիստոսի Ս. Խաչը, փրկութեան լոյսով կը վերանորոգէ իւրաքանչիւր հայու ներաշխարհը:

Օրհնութեան, սրբութեան, արգասաբերութեան ու մանաւանդ մայրութեան խորհրդանիշ հանդիսացող Ս. Աստուածածինը հայոց աշխարհին համար եղած է ու միշտ կը մնայ ամէնօրեայ փառաբանութեան արժանի դէմք մը, որով նաեւ ան հայ անհատին վերածնունդին անկլինաբարը կը նկատուի: Ի գուր չէ, որ մեր եկեղեցւոյ մէջ առօրեայ դրութեամբ կ'երգենք «Փառաւորեալ եւ օրհնեալ միշտ Սուրբ Կոյս Աստուածածին Մարիամ, մայր Քրիստոսի մատո զաղաչանս մեր Որդւոյ քո եւ Աստուծոյ մերոյ»: Այս տողերուն ընդմէջէն համայն աշխարհը հայոց կը խոստովանի Ս. Կոյս Մարիամի Աստուածամայր ըլլալուն իրողութիւնը, ինչպէս նաեւ անոր կատարած բարեխօսութեան դերը իր երկնաւոր Որդիին մօտ՝ ի խնդիր մեր (իր երկրաւոր գաւակներուն) փրկութեան ու բարօրութեան:

Դարերէ ի վեր հայ եկեղեցւոյ սուրբ հայրերէն մեզի ժառանգ մնացած Սուրբ Մօր այս խորհուրդը, մեծ նշանակութիւն ունի մեզմէ իւրաքանչիւրին համար. եւ որպէս հայորդիներ, մենք պարտաւոր ենք մեր յարգանքի ու փառաբանութեան տուրքը ընծայելու մեզի համար բարեխօսող Ս. Մօր, անոր նուիրուած ուխտի օրուն առիթով: Ահաւասիկ մեր պարծանքի աղբիւրը, որ Պիքֆայայի բարձրունքներէն առատօրէն իր օրհնութիւնները կը գեղու իւրաքանչիւր հայու հոգիին յագեցման համար: Խմենք անկէ առատապէս ու բարձրանալով անոր գագաթն ի վեր տեսնենք փառքը Երկնաւորին, փառքը մեր աշխարհին, փառքը մեր դարաւոր եկեղեցիին՝ արթուն պահապանը հայու տիպարին:

Արամկ Լոր. Արամյեան

## ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

### Անասկարկ սերը

Զբաղ առաւօտ մըն էր, ժամը 8:30-ի մօտ, տարեց, ութուննոց շնորհալի մարդ մը բժիշկին դարմանատունը մտաւ, որ բթամատին վրայի կարերը քակեն: Ան յայտնեց, թէ կ'աճապարէր, քանի որ ժամը 9-ին ժամադրութիւն ունէր:



Տեղւոյն հիւանդապահուիին տարեց մարդուն տաքութիւնն ու արեան ճնշումը չափեց եւ խնդրեց, որ սպասէ բժիշկին, սակայն գիտէր, թէ մէկ ժամէն հազիւ կարենար տեսնել բժիշկը: Ազնիւ բուժքոյրը երբ նկատեց, որ մարդը յաճախ ժամացոյցին կը նայի, որոշեց ինք անձամբ քննել բթամատը եւ երբ տեսաւ, թէ վերքը բուժուած է, բժիշկէ մը պէտք եղած ցուցմունքներն եւ գործիքները առաւ եւ գործի անցաւ: Մինչ կը քակէր կարերը, կիներ սկսաւ խօսակցիլ տարեց մարդուն հետ: Հարցուց, թէ արդէօք ուրիշ բժիշկի՞ մը հետ ժամադրութիւն ունէր այդ առտու, որ այդքան կ'աճապարէր:

«Ո՛չ», պատասխանեց մարդը, եւ բացատրեց, որ պէտք է ծերանոց հասնէր տիկնոջը հետ նախաճաշ ընելու: Երբ խօսակցութիւնը շարունակեցին, բուժքոյրը հարցուց, թէ եթէ ուշանար տիկինը պիտի նեղուէ ՚ր: Մարդը յայտնեց, թէ կիներ հինգ տարիէ աւելի էր, որ զինք չէր ճանչնար, քանի որ Ալզհայմըրը կը տառապէր:

Զարմացած բուժքոյրը հարցուց. «Եւ տակաւին ամէն առտու քո՞ վը կ'երթաք, հակառակ անոր որ ան ձեզ չի ճանչնար»: Մարդը ժպտելով հիւանդապահուիին ձեռքը շոյեց եւ ըսաւ. «Թէեւ կիսն այլեւս զիս չի ճանչնար, բայց ես դեռ գիտեմ, թէ ինք ո՞վ է»:

Մինչ մարդը կը մեկնէր դարմանատունէն, հիւանդապահուիին յուզուած մտածեց. «Այս տեսակ սեր կ'ուզեմ կեանքիս մէջ»:

Ճշմարիտ սերը ո՞չ ֆիզիքական է եւ ո՞չ զգացական: Ճշմարիտ սերը կ'ընդունի պարագան ինչպէ՞ս որ է: Ամենաերջանիկ մարդիկը անոնք չեն, որոնք ամէն բանի լաւագոյնը ունին, այլ անոնք են, որոնք իրենց ունեցածը լաւագոյն կերպով կ'օգտագործեն:

Մենք կրնանք զԱստուած ու Անոր սերը մոռնալ, բայց Ան երբեք մեզ չի մոռնար:

## ՍՈՒՐԲԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ



ԱՂԴԷ Հայրապետ

Աղդէ Հայրապետ եղաւ առաջին եպիսկոպոսը Եդեսիոյ աթոռին: Երբ Թաղէս Առաքեալ կու գայ Եդեսիա եւ բժշկելով Արգար թագաւորը զայն քրիստոնէայ կը մկրտէ, իրեն հետ նաեւ կը մկրտէ շատեր, որոնք կը ծառայէին թագաւորին եւ իրեն համար կը գործէին: Անոնցմէ մէկն էր նաեւ Աղդէ, արհեստով մետաքսագործ եւ Արգար թագաւորին համար թանկարժէք թագեր շինող:

Թաղէս Առաքեալին մեկնումով, Աղդէ կը նշանակուի եպիսկոպոս Եդեսիոյ աթոռին եւ իր շնորհները, թագաւորին օգնութեամբ, ի սպաս կը դնէ ամբողջ Միջագետքի, Մարաստանի եւ Պարսկաստանի տարածքին, քարոզելով քրիստոնէութիւնը եւ դարձի բերելով շատերը:

Սակայն երբ Արգար կը վախճանի, եւ իրեն կը յաջորդէ իր անհաւատ որդին, իր կարգին կը հրամայէ Աղդէին, որ իրեն ալ գեղեցիկ թագ մը շինէ: Աղդէ կը մերժէ գործադրել հրահանգը, յայտնելով թէ իր ձեռքերը ուրացող թագաւորի մը համար թագ չեն պատրաստեր: Այս պատասխանին վրայ թագաւորը մարդ կը դրկէ սպաննելու համար Աղդէ Հայրապետը: Դահիճը կը մտնէ եկեղեցի եւ տեսնելով Աղդէ Հայրապետը, որ բազմած իր գահին վրայ կը քարոզէր ժողովուրդին, սրունքները կը կտրէ ու կը սպաննէ զայն, մտաւորապէս 36 թուականին:



## Message du Prélat

### L'inestimable Marguerite

C'est la fête de l'Assomption de la Bienheureuse Vierge-Marie est c'est une opportunité pour nous tous de penser à la Sainte Vierge, de réfléchir à propos de sa vie et les rôles qu'elle a joués dans les églises chrétiennes en général et particulièrement dans l'église arménienne apostolique.

Quand l'archange Gabriel annonça à la Vierge-Marie sa maternité divine, la Vierge-Marie devenue la Très Sainte Vierge-Marie, parce qu'elle est devenue enceinte sous l'action de l'Esprit-Saint, a donné naissance à un enfant qu'elle nomma Jésus, et Il est devenu notre Sauveur. Quand la mère de Saint Jean Baptiste, Élisabeth, rencontra la Sainte Vierge pour la première fois, elle lui dit : « Vous êtes bénie entre toutes les femmes et vous portez un fruit béni. En d'autres mots, la Sainte Vierge était digne d'une sélection divine. Elle avait été choisie d'être la mère des mères entre toutes les femmes. Elle devint l'exemple pour toutes les mères et leur montra que leur vocation était la maternité.

Durant nos réflexions sur la Sainte Vierge, il est impossible de ne penser à certaines vérités.

a) La Sainte Vierge devint IMMACULÉE. Elle donna naissance au fils de Dieu qui est venu à ce monde pour être avec nous, pour nous guider et nous aider.

b) La Sainte Vierge devint la MÈRE DE DIEU. De Sa naissance à Sa Crucifixion, elle demeura à côté de son Fils et l'assista pour qu'il puisse réaliser Son Apostolat.

c) La Sainte Vierge devint un VAISSEAU DE LIBÉRATION. Elle a contribué à la réalisation du sacrement de la libération, parce que Jésus s'est acquiescé de sa divinité pour qu'Il nous livre du mal et nous guider vers la libération.

d) La Sainte Vierge devint une PORTE-PAROLE. Toutes les personnes qui lui prient, prie parce qu'ils veulent qu'elles soient leurs porte-parole auprès de Jésus, son fils, le Fils de Dieu.

Jésus avait promis à sa mère de l'emmener au Ciel et Il garda Sa promesse. La Sainte Vierge trouva sa place éternelle et digne d'elle.

Aujourd'hui même nous avons besoin de transformer nos vies, les rendre plus complaisantes à Dieu.

Nos prêtres et poètes ont écrit des hymnes et poèmes qui décrivent la Sainte Vierge d'une manière très belle et la dépeignent en « Fleur éternelle » et « arbre d'encens ».

On y retrouve aussi des descriptions comme : « Tu es un TEMPLE DE LUMIÈRES, tu es un AUTEL DORÉ, tu es l'INESTIMABLE MARGUERITE. »

Voici la signification de la fête de l'Assomption que tous les chrétiens doivent savoir, particulièrement les Arméniens.

*Archevêque Paphken Tcharian*



Each year on the Sunday closest to the date of August 15, the Armenian Church celebrates the Feast of the Assumption of St. Mary, the Holy Mother of God. In the Calendar of the Armenian Church, this feast is the fourth of five major feasts that are commemorated, and is the oldest one dedicated to St. Mary.

In the Holy Bible, there is little information concerning the details of St. Mary's life. As a result, the story of her Assumption has been preserved and passed on to us through the Holy and Sacred Tradition of the Apostolic Church.

Following the crucifixion of Jesus Christ, the Holy Virgin remains in Jerusalem, and lives under the care of St. John the Evangelist. For nearly 12 years, St. Mary lives by praying, fasting, and often visiting the empty tomb of her beloved Son. During one such visit to the tomb, the Archangel Gabriel appears and gives her the news of her imminent assumption to heaven. St. Mary relays the news to her relatives and all Christians, asking them to bury her in the valley of Gethsemane. St. Mary also asks the Apostle John to celebrate a Divine Liturgy, so she may receive Holy Communion one final time. After receiving Holy Communion, St. Mary returns to her room. As the Apostles prepare to mourn her death, St. John asks the Mother of God to leave an image of her face on a board of wood. St. Mary takes the board, crosses herself and brings it close to her face. Moistening the board with her tears, she asks God that by means of the board, people would be cured from disease. As the Apostles surround St. Mary, an indescribable light appears. The Son of God and the angels of heaven appear in the room. Seeing Christ, St. Mary dies.

St. Bartholomew the Apostle was absent and did not participate in the burial service of St. Mary. Upon his return to Jerusalem, he wishes to see St. Mary for the last time. Per his request, the Apostles open the tomb, yet they do not find the remains of St. Mary. According to His promise, Jesus Christ had delivered His mother to His heavenly kingdom. The Apostles give the board of St. Mary to St. Bartholomew for consolation. According to Moses of Khoren, St. Bartholomew brings the board to Armenia. It is kept in the Province of Andzav, in a location called Darbnots. Years later, a church is built there in honor of St. Mary, and a convent is opened.

On the Feast of the Assumption of St. Mary, the Ceremony of the Blessing of the Grapes is conducted, and the harvest for the entire year is blessed on that day.

The Armenian Church has a deep and abiding respect towards St. Mary. Special emphasis is placed on her being a mother, her honesty, her unique spirit of humility, her virtuous behavior and her unselfish dedication. For Armenian women, the Holy Virgin is the embodiment of virtue, pious motherhood, and the protector of family sacredness.

## Reflection during the season of the Transfiguration Matthew 16:13 – 17:13)



### Are you solid as a rock?

When you are with your family and friends, can they look at you and say, “Yep! You’re so honest, you’re so responsible, you’re so reliable, you’re so caring – you are solid as a rock to us!” Is that how you strive to behave, and is that how you are appreciated?

What kind of friends do you want to have in your life? Do you want people who do not tell the truth, who cheat on tests, who steal from lockers, who are doing things behind their parents’ backs like smoking and drinking? Or, do you want to hang with people who are solid as a rock in how they treat you were “Yes” is “Yes”, and “No” is “No”, and in how they care for you and behave with you and your friends?


Jesus gave His disciple, Simon, a nickname. The nickname in Greek is “Petros”, and in Armenian is “Vem”. It means “solid as a rock”. Then Jesus gave all of us the great example by saying, “On this kind of a rock I will build my Church.”

Are you as solid as a rock upon which Jesus can build His Church? Can Jesus trust you to be honest, to work hard, to be respectful to your family and friends, and most importantly, to love and honor God?

If you can always strive to be good and clean, honest and kind, hard-working and responsible, loving and filled with cheer, then you are exactly the kind of rock-solid person respected by your family, by your friends, by the Church, and by God.

Rev. Dr. George A. Leylegian,  
Archdeacon





**ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ**

**ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ  
ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ  
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ**

Այնքան ատեն որ փոփոխություն կայ, եւ ինչպէս նշեցինք մի շտ կայ փոփոխություն, միշտ նորոգութեան եւ վերանորոգումի պէտքը կայ: Ինչո՞ւ.

Այո, Աստուած ստեղծեց տիեզերքը, եւ սակայն այնքան ատեն որ յաւիտենականութեան մէջ չենք ապրիր, հակամէտ ենք շեղելու այն նպատակէն, որուն համար կանչուած էինք:

Յաւիտենականութեան մէջ վերանորոգումի պէտք չկայ, որովհետեւ ամէն ինչ կը գործէ անսխալ, առանց շեղելու այն նպատակէն, որուն համար ստեղծուած էր...:

Սակայն այս աշխարհին մէջ, ուր մենք կ'ապրինք, եւ որովհետեւ այս աշխարհը ո՛չ դրախտ է, ո՛չ յաւիտենականություն, մնայուն վերանորոգումի պէտք ունի, որովհետեւ բնութեամբ հակամէտ է շեղելու իր նպատակէն եւ կը հիննայ ազդուելով ժամանակէն եւ տարածութենէն: Յաւիտենականութեան մէջ, ո՛չ ժամանակ կայ, ո՛չ տարածություն:

Եթէ Ինքնաշարժ մը ունինք եւ կը գործածենք զայն 5,6,7 տարի, կը նորոգենք, կը վերանորոգենք, բայց երբ տեսնենք, թէ այլեւս իր նպատակին (մեզ փոխադրել) չի ծառայեր, պէտք է նոր մը գնենք:

Եթէ խնձորի պարտեզ մը ունինք. Ծառերը, որոնք ստեղծուած են, որ պտուղ տան, եթէ չտան, կարելի է պատուաստել ծառը, որպէսզի պտուղ տայ, սակայն 20-30 տարի ետք ծառը այլեւս իր նպատակին պիտի չծառայէ, եւ ուրեմն պէտք է նոր ծառ տնկել, որպէսզի պարտեզը պարտեզ մնայ եւ շարունակել պտուղ տալ...:

Համայնքները տարբեր չեն, յիշուած իրավիճակներէն, որովհետեւ ինչպէս ծառերը կոչուած են պտուղ տալու, եւ ինքնաշարժները շինուած են մարդոց եւ առարկաներու փոխադրութեան համար, նոյնպէս ալ համայնքները ստեղծուած են իրենց անդամներուն ԻՆՔՆՈՒԹԻՒՆը պահպանելու համար: Համայնք մը չի կրնար ծառայել նպատակի մը, կոչումի մը, երբ կը պակսի իր ինքնութեան խարիսխը կամ իր անհատականութեան առանձնայատուկ նկարագիրը:

Համայնքը ԻՆՔՆՈՒԹԵԱՆ պէտք ունի, որպէս խարիսխ, որպէսզի փոթորկոտ ծովին ալիքներուն կարենայ հակազդել եւ շատ չտարուբերիլ, որ խորտակումի կրնայ տանիլ:

Ազգ մը եւ համայնք մը ՀՈԳԵԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ պէտք ունին, որովհետեւ երբ ազգի մը կամ համայնքի մը հոգեկան եւ բարոյական ուժը տկարանայ, ո՛չ քաղաքական, ո՛չ ռազմական եւ ո՛չ ալ նիւթական հարստութիւնը կը փրկէ այդ ազգը կամ համայնքը:

Եկեղեցւոյ շէնքը կարելոր է, սակայն նիւթական արժէք ըլլալէ աւելի շէնքը պէտք է դառնայ գործող հոգեկան ուժ, բարոյական ուսուցում եւ նկարագրի կազմաւորման ընթացք...:

Թորոս Պապիկեան  
(Շարունակելի 2)



**ՀԱՐՑ Աստուածաբանութեան ընթացքին ինչպիսի՞ սրբազան գործողութիւններ կը կատարուին:**

Ամէնէն սովորականները ասոնք են. 1. Խաչակնքել. 2. Երկրպագություն. 3. Ծննդադրություն. 4. Գլուխ խոնարհեցնել. 5. Խնկարկել պատկերներուն եւ ժողովուրդին. 6. Խաչով, Աւետարանով եւ Սուրբերու մատուցներով օրհնել. 7. Թափօր. 8. Նախասոսնակ (կատարել). եւ՝ 9. Հսկում:

**ՀԱՐՑ Ի՞նչ կը նշանակէ Խաչակնքել:**

Խաչակնքել կը նշանակէ.

1. Վահանով պաշտպանուիլ չար ներգործություններու դէմ:

2. Յիշել մեր Փրկիչին Խաչին վրայ մահը, մարդկութեան ազատութեան (փրկութեան) համար:

3. Խաչակնքելով Աստուծոյ օգնութիւնն ու ողորմութիւնը կը խնդրենք, ո՛չ մեր բարի գործերուն ի պատասխան, այլ՝ խաչեալ Յիսուս Քրիստոսի գութին ապաւինելով:


**ՀԱՐՑ Ինչո՞ւ համար է մարմնական Երկրպագությունը:**

Որովհետեւ մարմինն ալ Աստուծոյ ծառայ է. անով (երկրպագութեամբ), անոր (մարդ անհատին) մէջ հոգեկանը կ'արթննայ եւ Տիրոջ ցոյց կու տայ մարմնական եւ հոգեւոր ծառայությունները միասնաբար:

**Մանկապատանեկան**

Ուշադրութեամբ դիտէ բոլորակները, որպէսզի կարենաս պատասխանել ստորեւ տրուած հարցումներուն:

**Թիւերու Պարտեզ**



- 1- Գտի՛ր այն թիւը, որ կը գտնուի դեղին բոլորակի մը մէջ, անկող Գ է եւ 10-էն նուազ է:
- 2- Գտի՛ր այն թիւը, որ կը գտնուի կարմիր բոլորակի մը մէջ, անկող Գ է եւ կրկնուող թուանշաններ ունի:
- 3- Գտի՛ր այն թիւը, որ կը գտնուի մանիշակագոյն բոլորակի մը մէջ, ԿՅ Գ է եւ կը բաժնուի թէ՛ 6-ով եւ թէ՛ 8-ով:
- 4- Գտի՛ր այն թիւը, որ կը գտնուի կապոյտ բոլորակի մը մէջ, ԿՅ Գ է եւ 15-էն մեծ է:
- 5- Ի՞նչ գոյնի բոլորակին մէջ կը գտնուի բարչրագոյն թիւը:
- 6- Ի՞նչ գոյնի բոլորակին մէջ կը գտնուի բարչրագոյն ԿՅ Գ թիւը:

# **ANI BAKERY**

## **ԱՆԻ ՓՈՒԱՊԱՆ**

### **Middle Eastern Pizza Lahmajoun**

#### **Սեփականատեր՝ Արսեն Տապալադեան**

Ուր կը գտնեք հայկական եւ արաբական լահմաճունի տեսակներ՝ փոքր եւ բնական չափերով: Լահմաճունը կը պատրաստենք մեր չափերով եւ յաճախորդներուն պահանջքին համաձայն՝, միսը իրենցմէ կամ մեզմէ: Կը պատրաստենք եւ կը ծախենք նաեւ թահինով հաց: Միշտ պատրաստ ենք ձեր ապսպրանքներուն գոհացում տալու ուրախ եւ տխուր առիթներով

**Փորձեցեք եւ  
գոհ պիտի մնաք**



### **NEW ADDRESS FROM JANUARY 2016**

**Ani Bakery Ltd** 25 Howden Road, Unit #2  
Scarborough, Ontario M1R 3C3 | Phone: (416) 285-7164

Բաց ենք շաբաթը վեց օր, Կիրակի մինչեւ կեսօրէ ետք՝ ժամը 2:00  
(Երկուշաբթի փակ)



## CASSANDRA I.D.A. PHARMACY

ARMENIAN MEDICAL CENTRE  
& PHARMACY

PHARMACISTS  
SARKIS BALIAN, BScPhm, RPh  
MARAL BALIAN, PharmD, RPh  
VARTAN BALIAN, PharmD, RPh

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ՝  
ՊԱԼԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐ՝  
ՄԱՐԱԼ ՊԱԼԵԱՆ  
ՎԱՐԴԱՆ ՊԱԼԵԱՆ

- Դեղագիրներու պատրաստութիւն՝ շաբաթական յատուկ տուփերու մեջ:
- Արեան ճնշման քննութիւն եւ հետեւողականութիւն՝ անվճար
- Շաքարախտի քննութիւն
- Դեղերը իրենց հասցեներուն առաքելու անվճար սպասարկութիւն
- Տարեցներու 10% զեղչ
- Կը յարգենք եւ սիրով կը կատարենք բոլոր ապահովագրական ընկերութիւններու պայմանները
- Walk-In Clinic բաց է շաբաթը 6 օր: Կրնաք բժիշկները տեսնել առանց ժամադրութեան:

Դիմեցէք մեզի եւ պիտի դառնաք մեր մնայուն յաճախորդը:

**Walk-in Clinic onsite: (416) 331-9111**

հասցէ՝ 2040 Victoria Park Ave. (Victoria Park & Cassandra)  
Toronto, Ontario M1R 1V2 Tel: (416) 449-2040 Fax: (416) 449-2048



# ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ՝ ՏԱՐԵԿԱՆ ՔԵՐՄԷՍ

Հովանաւորութեամբ՝  
ԳԵՐՇ. Տ. ԲԱԲԳԷՆ ՍՐԲ. ԱՐՔ. ՉԱՐԵԱՆԻ  
*Բարեգան Առաջնորդ՝ Գանատայի Հայոց Թեմի*  
Կապաւորութեամբ՝  
Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀՈԳԱԲԱՐՉՈՒԹԵԱՆ

Երեկոն պիտի Խանդավառէ՝  
**ՍԱԳՕ ԹԱՇՃԵԱՆ**  
Ընկերակցութեամբ՝ դաշնակախար  
**ՎԱԶԷ ԺԱՄԿՈՉԵԱՆ**

Կատի՝  
**DJ JACK-ի**



Early Bird tickets  
include gifts!

Տեղի Կ'ունենայ  
**ՈՒՐԲԱԹ 11, եւ ՇԱԲԱԹ 12, ՕԳՈՍՏՈՍ, 2017**  
Երեկոյեան ժամը **6:00**-էն սկստալ  
Եկեղեցւոյ Բակին Մէջ:  
Սուտքի Կոտի՝ **\$10.00**

St. Mary Armenian Apostolic Church  
45 Hallcrown Place  
Toronto, Ontario, Canada  
M2J 4Y4  
Tel: (416) 493-8122



**ARZ**  
fine foods





# ՀԱՐՄ Լավալ Մասնաճիւղի Տարեկան Դաշտահանդէս



## Picnic

Անուշեղէնի Վաճառք Bake sale  
Խորոված եւ հաճելի ժամանց

Շաբաթ եւ Կիրակի. 26 եւ 27 Օգոստոս 2017

Լավալի Հայ Կեդրոնի շրջափակին մէջ  
Մուտքը Ազատ  
Մարզական խաղեր փոքրերու համար

Յանկեալ տեղեկութիւններու համար՝ հեռաձայնել -  
Էդր. Եսայի Թորոսեան 514 821 5050  
Քոյր Սոնա Լախոյեան 514 979 6272  
Homenetmenlaval@yahoo.ca

# ARMENIAN HERITAGE CRUISE®

JANUARY 20-28, 2018 - 8 NIGHT CRUISE!



You must book with TravelGroup in order to attend our private Armenian parties!

- St. Kitts • Antigua
- Puerto Rico • Labadee

INSIDE CABIN	\$1044
PROMENADE INSIDE	\$1094
OCEAN VIEW	\$1234
DELUXE BALCONY	\$1524
SUPERIOR BALCONY	\$1574

SUITES available upon request

3rd or 4th adult or child over 11 years old sharing same cabin \$730  
Children 11 years old and younger \$430


ALL RATES\* are per person, double occupancy.  
\*Government tax of \$100.00 per person is additional.  
Prices include all port charges and A/C A/I tag extension fee. Deposit of \$250 per person due upon booking.  
Cruise is fully refundable until June 1, 2017. Rates and information subject to change at any time without notice.

For Reservations Contact:  
Local 561-447-0750  
Toll Free 1-866-447-0750 Ex. 108 or 102  
125 SE Mizner Blvd., Suite 14  
Boca Raton, FL 33432  
AHC@travelgroupintl.com



SIBIL

HAROUT  
PAMBOUKJIAN



AKH'TAMAR DANCE ENSEMBLE



Call Arpi Ashkarian (Canada) (519) 748-2672





# Խանասորի Արշալանքին 120ամեակ. «Յուլիս ամսու25-ին կատարեցէք մեր սօնը»



Յուլիս 25-ի օրը, 120 տարի առաջ, թրքական եւ ռուսական կայսրութեանց տիրապետութեան տակ երկփեղկուած, այլեւ անոնց միջեւ կռուարխնէր դարձած Հայաստան Աշխարհը պարեցաւ ազգային ու ռազմաքաղաքական իր ինքնավստահութեան վերականգնումի հպարտաբեր պահը:

Ինչպէս որ Խանասորի Արշալանքին մասնակիցներէն եւ ազգային-ազատագրական շարժման լուսաւոր ռահվիրաներէն Գալուստ Ալոյեան հետագային պիտի գրէր իր սրտաբուլի բանաստեղծութեան՝ իրերայաջորդ սերունդներու կողմէ պահպանուած ու պանծացուած յեղափոխական երգին մէջ.

Կարկուտ տեղաց Խանասորայ դաշտումը,

Ֆետայիններ դաշնակցական, վրէժ առան հովտումը

Մի ժամուայ մէջ Մագրիկ ցեղը ջնջուեցաւ,

Խանասորայ Կանաչ դաշտը կարմիր արեամբ ներկուեցաւ:

Հայեր ինչէք նուիրական այս օրը, Յուլիս ամսու քսանհինգին կատարեցէք մեր սօնը:

25 Յուլիս 1897ի անմոռանալի այդ օրը, պատմութեան դաժան դասաւորումով երկատուած ու գերեվարուած Հայ ժողովուրդը, իր դաշնակցական Ֆետայիններուն յայտնաբերած ուժերու գերագոյն լարումով, պատմութեան թատերաբեմին վրայ իր արժանի տեղը ունենալու իրաւունքը նուաճեց:

Ինչպէս որ ժողովրդականացած սիրուած երգը կը յուշէ, մէկ օրուան մէջ իրագործուեցաւ Խանասորի արշալանքը: Քանի մը ժամէն քերտ յանցագործներու կարմիր արեամբ ներկուեցաւ Խանասորայ կանաչ դաշտը:

Հարիւրաւոր Հայ յեղափոխականներու արեան հեղուներն պատասխանատուն էր թրքական պետութեան արիւնարբու կամակատարը դարձած քրտական Մագրիկ ցեղախումբը, որ Խանասորի Արշալանքով արեամբ պատմութեան Դաշնակցութեան որոշումով:

24էն 25 Յուլիս 1897ի լուսող գիշերուան կանուխ ժամերուն, թուրք պարսկական սահմանը յանգեցորէն հատեցին 253 դաշնակցական մարտիկներ, որոնց 40ը՝ ձիաւոր: Արշալանքումը ճամբայ ելաւ Սալմաստէն, արագորէն կտրեց Արաուզ լեռան լանջը եւ, լեռնային ճանապարհով, ուղղուեցաւ դէպի Վանայ Լիճին հարաւ-արեւելքը դանուող Խանասորի դաշտը:

Խանասորայ դաշտը ամառնային բանակավայրն էր անարգ Մագրիկ ցեղախումբին, որ իր արիւնարբու աշխարհապետ Շարաֆ պէյի ղեկավարութեամբ, տարի մը առաջ, 1896ի Յունիսին, ուղղակիորէն թիկունքէն հարուածած ու կոտորածի ենթարկուած էր Վանէն Պարսկաստան անցնող աւելի քան երեք հարիւր Հայ մարտիկներ: Թրքական բռնակալութեան դէմ ըմբոստացած յեղափոխական հայրերէն էին անոնք, որոնք դաշնակցական Պետոյի, արմենական Աւետիսեանի եւ հնչակեան Մարտիկի գլխաւորութեամբ՝ Վանի հայութեան ինքնապաշտպանական առաջին կոիւնները մղած էին եւ անդէն հայերու վրայ յարձակող թրքական զօրքը ետ մղած էին: Եւրոպական մեծ տէրութեանց հիւպատոսներու միջնորդութեամբ ու երաշխաւորութեամբ՝ թուրք կուսակալին եւ Վանայ հայոց ներկայացուցիչներուն միջեւ գոյացած էր համաձայնութիւն, որուն հիման վրայ հերոսաբար կռուած երիտասարդութիւնը ժամանակաւորապէս պէտք է հեռանար Վանէն:

Այդ երիտասարդներն էին, զինեալ եւ անզին տղաք, որ նոյնինքն Պետոյի, Աւետիսեանի եւ Մարտիկի գլխաւորութեամբ կ'ուղղուէին դէպի Սալմաստ՝ Ատրպատական, երբ թուրքեպարսկական սահմանը չհատած՝ յարձակումի ենթարկուեցան եւ կոտորուեցան Շարաֆ պէյի Մագրիկ ցեղախումբին կողմէ:

Հայկական արիւնի այդպէս վատաբար ու անարգ հեղումը, քերտ հրոսակներու ձեռամբ, անպատասխան եւ անպատիժ էր կրնար մնալ ու չմնաց:

Եւ Խանասորի արշալանքը եկաւ հայոց նորագոյն պատմութեան այդ հատու պատասխանը անջնջելիորէն խարանդու Հայր սեփական երկրին մէջ կոտորելու ելած ամէն կարգի ոսոխներու ճակտին:

Թրքական բռնատիրութեան ծառայակոչուած Մագրիկ ցեղախումբը այդպէս ստացաւ իր արդար պատիժը:

Իսկ Հայրենատէր Հայր վերականգնեց իր ազգային ինքնավստահութիւնը՝ դարբնու գերութեան հետ հայկական այրուձի կազմելով եւ ի հեճուկս պարսկական, ռուսական թէ թրքական իշխանութեանց ճնշումի զօրքերուն, սեփական հողին ու կեանքին տիրութիւն ընող պատժական այդ արշալանքին ձեռնարկելով:

Դաշնակցութիւնը շատ երկար մտածեց եւ նպատակայարմարութեան ու յաջողութեան բոլոր երեսներով եւ ման-

րամասնութիւններով քննեց ու կշռադատեց իր քայլը, գործնական որեւէ նախաձեռնութեան դիմելէ առաջ: Հարկ եղաւ սպասել մինչեւ 1896ի տարեվերջին եւ 1897ի տարեսկիզբին Թիֆլիսի մէջ Հ.Յ.Դ. Ռայոնական ժողովի գումարումին՝ եզրակացնելու եւ որոշելու համար, որ այո՛, պէ՛տք էր այդպէս՝ մեծաթիւ արշալանքումը մը քրտական ցեղախումբը պատժել եւ, նախ, անհրաժեշտ դասը տալ բոլոր անոնց, որոնք հայու արիւն կը հեղէին՝ անպատժելութեան ապաւինելով: Միաժամանակ՝ Աւետիսեաններու, Մարտիկներու եւ Պետոներու նահատակութեան վրէժը լուծել: Ու, տակաւին, հաւասարապէս թէ՛ ջարդարար Սուլթանին, թէ՛ Պիղատոսի պէս ձեռքբեր լուսող Եւրոպային ազդարարել, որ այլեւս կարելի չէ բիրտ ուժով լուծութեան մատնել կամ արեան բաղնիքներու մէջ խեղդել փորձել Հայ ժողովուրդի եւ Հայաստանի արդարութեան ու իրաւունքի մարտունակ ձայնը:

Առաջին հերթին, Հայ ժողովուրդին ճակատագրակից քրտական ցեղախումբը մեծ մասամբ ի վերջոյ հասկեցան, որ իրենց իսկ իրաւունքներուն եւ շահերուն պաշտպանութեան սիրոյն գէնք պէտք է բարձրացնէին Հայ ժողովուրդին ու անոր յեղափոխական գաւազներուն դէմ: Սուլթանին կողմէ զինուած, հովանաւորուած եւ հայոց դէմ արձակուած, արիւնալի կոտորածի ձեռնարկած ու անպատիժ մնացած քրտական ցեղախումբերէն շատեր ի վերջոյ սթափեցան եւ անդրադարձան, թէ թշնամին հայն ու Հայաստանը չեն, այլ՝ նոյնինքն թրքական պետութիւնն է:

Աւելի՛ն. Մագրիկ ցեղախումբին եւ անոր մեծաւորին՝ Շարաֆ պէյի օրինակով անուղղայ բարբարոսներուն տրուեցաւ այնպիսի՝ «համոզիչ» դաս, որ բոլորն ալ անդրադարձան, թէ այլեւս կարելի չէ հայու արեան ու ինչքին հետ այդպէս վարուիլ՝ անպատիժ սպաննել ու յափշտակել, գողնալ ու աւերել:

Խանասորի Արշալանքին անմոռանալի դասերուն վերջինը, այլեւ կարեւորագոյնը եղաւ այն, որ նոյնինքն Սուլթանին եւ անոր հիւանդ մարդու սնարին շուրջ հաւաքուած, միայն Օսմանեան Կայսրութեան «ժառանգէն» առիւծի բաժին խլելու կայսերապետութեամբ կուրացած եւրոպական մեծ տէրութիւններուն հարկ էր լսելի ու հասկնալի դարձնել միեւնոյն հատու պատգամը. Հայր այլեւս անցնալի ռայան ու ստորուկը չէ, այլ՝ ազգային իր իրաւունքնե-

րուն, Ազգի եւ Հայրենիքի ազատագրութեան համար «Ազատութիւն կամ Մահ» վճիռով գէնք բարձրացուցած աննկուն մարտիկն է:

Թէեւ իր շղթայագերման առաջին տասնամեակը նոր աւարտած էր հայոց յեղափոխական պոռթկումը, այսուհանդերձ՝ արդէն կտրած էր ինքնահաստատման այնքան կարեւոր ուղի, որ ի վիճակի էր այդպէս՝ 250է աւելի մարտիկներով արշալանքումը կազմակերպել եւ պատժել Հայ ժողովուրդին ու Հայ յեղափոխականներուն սպառնացող «ցեց»երը:

1897ի տարեսկիզբին գումարուած թիֆլիսեան իր Ռայոնական ժողովէն եւ անոր հաստատած ա՛յս որոշումէն ետք ալ, Դաշնակցութիւնը շարունակեց յեղափոխական շրջահայեցութեամբ շարժիլ Խանասորի արշալանքի կազմակերպման իր աշխատանքներուն եւ նախապատրաստական քայլերուն մէջ: Մինչեւ Յունիս 1897 շարունակուեցան բուռն քննարկումները եւ տարակարծութիւնները Նիկոլ Դումանի կողմէ ներկայացուած եւ Ռայոնական ժողովի հաւանութեան արժանացած պատժական արշալանքախումբի առաջարկին շուրջ: Թէեւ ոչ ոք վիճելի կը նկատէր հայոց ազգային՝ ազատագրական պայքարին կենսունակութիւնն ու մարտունակութիւնը վերահաստատելու հրամայականը, այսուհանդերձ՝ կային հիմնաւոր առարկութիւններ այդպիսի մեծաթիւ արշալանքումը ցուցական քայլի մը արդիւնաւէտութեան, նպատակայարմարութեան եւ, ինչու ոչ, նաեւ յաջողելու հաւանականութեան հանդէպ:

Ատրպատական հաւաքուեցաւ դաշնակցական գործիչներու եւ ֆետայիններու ամբողջ փաղանգ մը: Հոն էին Նիկոլ Դումանն ու Վարդանը (Մեհրապեան), իշխան Յովսէփ Արղութեանն ու Կարոն (Արիստակէս Չօբեան, Ռոստոմի կրտսեր եղբայրը), Յարութիւն Շահրիկեանն ու Վազգէնը (Տիգրան Տէրոյեան), Գուրգէնն (Պաղտատար Մալեան) ու Սեւքարեցի Սաքոն, Քրիստափոր ՕՏանեանն ու Գալուստ Ալոյեանը, Փոխիկն ու Ախպերը, տակաւին նորագիր պարզ գիտնոր Անդրանիկն ու շատ՝ շատեր: Շուրջ երեք հարիւր կը հասնէր անոնց թիւը:

Արշալանքումը դադափարին համաձայն չէին իշխան Յովսէփ Արղու-

Խանասոր... Ծար. էջ 13  
Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

# Հարցազրույց «Նոր Ծաղիկ» երգչախումբի խմբավար Էլիզապեթ Հարպոյեանի հետ

Այս տարի Ս. Յակոբ Առաջ. Մայր եկեղեցույ «Նոր Ծաղիկ» մանկապատանեկան երգչախումբին հիմնադրութեան 10-ամեակն է եւ այդ առթիւ Հոկտեմբերին երգչախումբը բացառիկ ելոյթ պիտի ունենայ: Ստորեւ «Հորիզոն»-ի հարցազրույցը խմբավար տիկին Էլիզապեթ Պտղունի Հարպոյեանի հետ:

Հ.- «Նոր Ծաղիկ» երգչախումբը ե՞րբ հիմնադրուեցաւ, ինչպէ՞ս եւ որո՞ւ նախաձեռնութեամբ:

ԷՀ.- Մանկապատանեկան երգչախումբի գաղափարը ունեցած էր Ս. Յակոբ եկեղեցույ հովիւ Տ. Գառնիկ Աւ. ՔՀՆ. Գոյունեան: Տէր Հօր առաջարկով եւ եկեղեցույ հոգաբարձութեան հաւանութեամբ՝ 2006-ի աշնան ստանձնեցի երգչախումբին խմբավարութիւնը, եւ սկսան «Նոր Ծաղիկ»-ի աշխատանքները: 25 փոքրիկներով սկսան փորձերը: Ներկայիս երգչախումբը ունի 50 անդամ: «Նոր Ծաղիկ»-ի հիմնադրութենէն մինչեւ օրս երգչախումբին մաս կազմած են 180 փոքրիկ: 2007-ի Համերգին մասնակցող անդամներէն խումբ մը, իրենց իսկ փափաքով, մաս պիտի կազմեն յառաջիկայ Համերգին: Մեր փորձերը տեղի կ'ունենան Ուրբաթ օրերը ժամը 4.30-6.00: Փորձէն առաջ փոքրիկներուն կը հրամայուի նախընթաց մը, որովհետեւ անոնք դպրոցէն բաւական յոգնած եւ ուժասպառ կու գան: Փորձերը կը սկսինք ձայնամարդութեամբ ապա կ'անցնինք երգացանկին:

Հ.- Առ այսօր քանի՞ համերգով ներկայացաք մեր ժողովուրդին եւ ի՞նչ էին յայտագիրները:

ԷՀ.- Նախ կ'ուզեմ յիշել, որ խումբը տարուան ընթացքին տօնական առիթներու կ'երգէ Մ. Եկմախանի պատարագը, երբեմն ալ Կոմիտասեան պատարագէն բաժիններ, եւ միշտ բացառիկ գնահատանքի կ'արժանանայ ժողովուրդին կողմէ: Առ այսօր «Նոր Ծաղիկ»-ը մոնթրէալահայութեան ներկայացած է 10 Համերգով եւ տարբեր երգացանկերով: Այս Համերգներէն էին. «Հայ մանուկի տարի»-ին նուիրուածը՝ 2011-ին, «Հայ գիրքի տպագրութեան 500-ամեակ»-ին նուիրուածը՝ 2013-ին, «Նանորին ուխտը» քերթուածները, որ նուիրուած էր Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին՝ 2014-ին, «Կոմիտասեան Համերգ»-ը՝ 2015-ին, երբ Կոմիտասի եկեղեցական, ազգագրական եւ մանկական երգերէն փունջեր երգուեցան:

Հ.- Ի՞նչ եղաւ «Նոր Ծաղիկ»-ի արգասիքը:

ԷՀ.- Ինչպէս յիշեցի, մեծ թիւով փոքրիկներ մաս կազմեցին «Նոր Ծաղիկ»-ին, եւ հոն սերունդ մը մարզուեցաւ՝ ծանօթանալով հայ երաժշտութեան: «Նոր Ծաղիկ»-ը դարձաւ հայեցի դաստիարակութեան եւ մշակոյթի պահպանման օճախ մը: Հոն մեր փոքրիկները սորվեցան երգել առանց պոռալու, մեղմ եւ ճշգրտօրէն:

Հ.- Ի՞նչ է այս տարուան բացառիկ համերգին յայտագիրը:

ԷՀ.- Նախ ըսեմ, որ այս տարուան Համերգը կը զուգարկուի «Նոր Ծաղիկ»-ի հիմնադրութեան տասնամեակին, այդ առիթով որոշեցինք մոնթրէալահայութեան հրամայել բացառիկ Համերգ մը, որ կը բաղկանայ երկու բաժինէ: Առաջին բաժինը կ'ընդգրկէ Հայրենաբնակ յայտնի երաժիշտ-երգահան Արեգ Լուսինեանի մանկական գեղեցիկ եւ բազմաձայն երգերէն փունջ մը: Երկրորդ բաժինը կ'ընդգրկէ առաջին մատուցում մը «Մանկապատանեկան Պատարագ»-ի, որուն երգահանը դարձեալ Արեգ Լու-



սինեանն է: «Մանկապատանեկան Պատարագ»-ին խօսքերը գրուած են Ս. Պատարագի խօսքերուն ներդաշնակաբար եւ աշխարհաբարով: Խօսքերը յարգած են Ս. Պատարագի երգերուն իմաստներն ու կըռոյթները: «Մանկապատանեկան Պատարագ»-ը կը բաղկանայ եռաձայն 17 երգերէ եւ ունի երգահանի նուագակցութիւն:

Հ.- «Նոր Ծաղիկ»-ի փոքրիկները ինչպէ՞ս ընդունեցին այս գործը, որիւմ դժուարութիւն ունեցա՞ք:

ԷՀ.- Արեգ Լուսինեանի յորինած երգերէն մէկ քանին «Նոր Ծաղիկ»-ը մեծ հաճոյքով մեկնաբանած է անցեալին, գանազան համերգներու ընթացքին: Սակայն մանկապատանեկան պատարագ սորվեցնելը մեծ մարտահրաւէր մըն էր ինծի համար, քանի որ խումբիս անդամները մեծամասնութեամբ զուրկ են երաժշտական հիմնական գիտելիքներէ: Սակայն, ինչպէս այլ մարտահրաւէրներ ստանձնած էի, այս ալ ստանձնեցի: Քանի որ այս պատարագը սքանչելի յորինում մըն է եւ առաջինը՝ հայ իրականութեան մէջ: Խումբը մեծ հաճոյքով եւ լրջութեամբ սորվեցաւ: Դիւրին չէր աշխատանքը, սակայն համերգութեամբ եւ յարատեւ ճիգով յաղթահարեցինք բոլոր խոչընդոտներն ու դժուարութիւնները: Հոս տեղին է յիշել խումբին ընկերակցող դաշնակահարուհի տիկին Դալար Հարպոյեան Գալլօլիանի ունեցած մեծ ներդրումը: Ան իր երաժշտական բացառիկ հմտութեամբ եւ ժրջանօրէն կը մասնակցի «Նոր Ծաղիկ»-ի փորձերուն:

Հ.- Ինչպէ՞ս կը գնահատէք «Մանկապատանեկան Պատարագ»-ին երաժշտութիւնը:

ԷՀ.- Անիկա ունի գեղեցիկ եւ հրեշտակային ոլորտներ, արտայայտելու զգայուն կերպեր: Արուեստի բացառիկ եւ ազնուական գործ մըն է, ուր մտածումը, երաժշտութիւնը եւ հաւատքի զգացումները միասնաբար զարգանալով կը կազմեն ներդաշնակ ամբողջութիւն մը: Համոզուած եմ, որ այս գեղեցիկ յօրինումը հայ եկեղեցույ երաժշտական ժառանգութեան մէջ պատուոյ տեղ պիտի գրուէ եւ պիտի յաւերժանայ:

Հ.- Ինչպէ՞ս եղաւ Արեգ Լուսինեանի ընտրութիւնը:

ԷՀ.- Պրն. Արեգ Լուսինեանի գործերուն ծանօթ էի տարիներ առաջ: Անձնապէս իրեն ծանօթացած էի Պէյրութ իր այցելութեան ընթացքին: Ան լսած էր 9 տարեկան դուստրիս՝ Փաթիլին դաշնակի մենահամերգին գովքը եւ փափաք յայտնած էր, որ անձամբ ունկնդրէր Փաթիլին դաշնակահարութիւնը: Ուստի պատիւը ունեցած էինք զինք ընդունելու մեր տան մէջ: Իմ ծանօթութիւնս Արեգ Լուսինեանի հետ աւելի զարգացաւ

«Նոր Ծաղիկ»-ի համերգային երգացանկերու պատրաստութեանց ընթացքին: Ուստի, երբ Տ. Գառնիկին հետ միասնաբար որոշեցինք «Մանկապատանեկան Պատարագ»-ի մը յօրինումը, անմիջապէս նկատի ունեցանք զինք: Ուստի առաջարկեցինք պրն. Արեգ Լուսինեանին, որ ինք ստանձնէր այս գործը: Ան սիրալոյս ընդունեց մեր առաջարկը եւ անցաւ աշխատանքի: Ամիսներու տքնաջան աշխատանքէ ետք ամբողջացուց յօրինումը: Այստեղ յատկապէս պէտք է յիշել տիկին Շաքէ Կէօնճեանի առատաձեռն մեկնաստութիւնը, որ սատարեց «Մանկապատանեկան Պատարագ»-ի իրականացման:

Հ.- Ե՞րբ եւ ո՞ր տեղի պիտի ունենայ «Նոր Ծաղիկ»-ի տասնամեակին նուիրուած համերգը:

ԷՀ.- Համերգը տեղի պիտի ունե-

նայ 21 Հոկտեմբեր 2017-ին, երեկոյան ժամը 7:00-ին, Centre Armenie, 1025 Boul. Elizabeth, Laval:

Համերգին պիտի վաճառուի նաեւ «Մանկապատանեկան Պատարագ»-ին խտասարկը, որուն մեկնաստներն են տէր եւ տիկին Մանուկ Զուխաճեանները: Նշեմ, որ պրն. Արեգ Լուսինեան անձամբ ներկայ պիտի ըլլայ «Մանկապատանեկան Պատարագ»-ի անդրանիկ մատուցման, եւ համերգին հասոյթը պիտի նուիրուի Ստեփանակերտի ՀՕՄ-ի «Սօսէ» մանկապարտէզին:

Հ.- Ինչի՞նք մէջ կը կայանայ «Նոր Ծաղիկ»-ի յաջողութիւնը:

ԷՀ.- Ինչպէս կ'ըսէ առածը՝ մէկ ծաղիկով գարուն չի գար: «Նոր Ծաղիկ»-ին յաջողութիւնը կը կայանայ խումբ մը անձերու միասնակամ եւ նուիրաբար աշխատանքին մէջ: Իմ աջ բազուկս՝ դաշնակահարուհիս Դալար Հարպոյեան Գալլօլիանը (դուստրս), իր մեծ բաժինը ունի այս գործին յաջողութեան մէջ: Ան իր նուագակցութեամբ առաւել կը փայլեցնէ «Նոր Ծաղիկ»-ը: Իսկ երէցիկն Նինա Գոյունեանի գործնական աջակցութիւնը խումբի գանազան աշխատանքներուն՝ գերազանցօրէն գնահատելի է: Ան կ'աշխատի բացառիկ բժախնդրութեամբ եւ հասկացողութեամբ: Այս առթիւ շնորհակալութիւն կը յայտնեմ նաեւ Մոնղական յանձնախումբին եւ ծնողներուն, Ս. Յակոբ Առաջ. Մայր եկեղեցույ Հոգաբարձութեան եւ հովիւին, որոնք տարիներէ ի վեր զօրավիզ կը կանգնին եւ կը քաջալերեն զիս ու «Նոր Ծաղիկ»-ը:

«Հորիզոն»

**Ascenseur *Adams* Elevator**  
Services Inc.  
PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4  
**RBQ# 1812-6474-22**

**www.adamselector.ca**

**TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613**


**RENOVATION, REPAIRS, MAINTENANCE,  
INSTALLATION OF ELEVATORS.**

**Eddie, Pedro, Joyce Oughourlian**









L'ÉVÈNEMENT

# ÉQUIPÉ POUR L'ÉTÉ

DE NISSAN

GROUPE NISSAN  
**GABRIEL**

## LE TOUT NOUVEAU NISSAN QASHQAI 2017

À PARTIR DE  
**19 998\$\***

+

FRAIS DE TRANSPORT ET  
AUTRES FRAIS

**2 065\$\***

AU TOTALE POUR LE QASHQAI S

**22 063\$\***



Modèle européen illustré. Le modèle canadien peut varier.

La mobilité intelligente de Nissan guide tout ce que nous faisons. Nous utilisons la technologie pour transformer les voitures en de véritables partenaires de conduite. Ensemble, les déplacements se font avec davantage de passion et de confiance, tout en étant mieux connectés. Qu'il s'agisse de voitures qui partagent la conduite avec vous ou d'autoroutes qui rechargent votre véhicule électrique pendant qu'il roule, toutes ces innovations arriveront dans un futur très proche. Et les véhicules Nissan que vous conduisez aujourd'hui offrent déjà un aperçu de ce futur.

CONSULTEZ [NISSANGABRIELJEANTALON.COM](http://NISSANGABRIELJEANTALON.COM) OU [NISSANGABRIELANJOU.COM](http://NISSANGABRIELANJOU.COM) POUR PLUS DE DÉTAILS  
L'ASSOCIATION DES CONCESSIONNAIRES NISSAN DU QUÉBEC

**NISSAN**  
**GABRIEL**  
JEAN-TALON

3500, rue Jean-Talon O., Montréal, QC H3R 2E8  
514 509-7777 | [nissangabrieljeantalon.com](http://nissangabrieljeantalon.com)

⟨ OUVERT LES SAMEDIS ⟩

**NISSAN**  
**GABRIEL**  
ANJOU

7010, boul. Henri-Bourassa E., Anjou, QC H1E 7K7  
514 324-7777 | [nissangabrielanjou.com](http://nissangabrielanjou.com)

⟨ OUVERT LES SAMEDIS ⟩

\*Livraison du Nissan Qashqai 2017 à partir du 5 juin 2017. Quantité limitée. Frais de transport et de préparation (1 750\$) ne sont pas inclus. Les frais de 100\$ pour le climatiseur (le cas échéant), les rabais du manufacturier et les contributions des concessionnaires sont compris. Cette offre ne peut pas être combinée à aucune autre promotion. Taxes, immatriculation, droits spécifiques sur les pneus neufs (15\$) et assurances en sus, et exigés à la signature du contrat. Certaines conditions s'appliquent. Visitez Nissan Gabriel Jean Talon pour tous les détails.



BARRY




KAREN



GARO

# KAZANDJIAN



EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

ÉQUIPE KAZANDJIAN.com

CLASSÉS PARMIS LES MEILLEURS COURTIER RE/MAX AU MONDE  
RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS IN THE WORLD

KAZANDJIAN REALTY.com

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC, H4N 3C5